

Ս Ի Ո Ւ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻԵՏՈՎԱԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿԱՐՔ ԵՎ ԱՌԱՋՎԱՎԱՐ ՀԱՅ ՊՈՎԵՐԱՐՄԱՆ ԹԵՂԵԿ

Ն Ո Ր Շ Ր Ձ Ա Ն

ԺԴ. ՏԱՐԻ 1940



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՍԻՐԱՆ

ԺԴ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1940

» Ա. Պ. Բ. Լ. «

Թիւ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Բաւական ուշ կ'անդրադառնանք այս իրողութեան, որուն սարսափը, և ահռելի հետևանքներու մղձաւանջը ամիսներէ ի վեր մտահոգած են եւրոպայի հետ ամրող մարդկութիւնը. որովհետև սիրեցինք յուսալ որ ան շուտով պիտի կընար վերջանալ, թէ մարդիկ ի զին ամէն զոհողութեան պիտի խնայէին աշխարհի Մեծ Պատերազմի արիւնոտ սպանդին յաճախանքը, որուն աւերներով տակաւին կը տուայտին վերապրող հոգիները: Դժբախտաբար սակայն պատերազմը իրողութիւն մըն է, և ամիսներէ ի վեր արիւնը կը հոսի: Այս պարագան նորէն կը մթագնէ հոգիները մարդկային քաղաքակրթութեան և յառաջդիմութեան զաղիպակուն սառւզութեան հանդէպ, և այդ իր պատճառները ունի: Չեմ ակնարկեր արևմտեան քաղաքակրթութեան տկարութիւններուն, ժողովուրդներու աճման, ճարտարարուեստական կեանքի անպատճութեանց և տրգեղութեանց, աղքատութեան և հարստութեան հակադրութեան, դասակարգերու, ցեղերու և ազգերու պայքարին: Ասոնք ընկերային հարցեր են, և չենք ուզեր հոս անոնց վերլուծման ջանադիր ըլլալ, ոչ միայն տեղը չէ, այլ նաև վասնզի ոչ ոք կընայ հաւատալ թէ ժամանակէ մը ի վեր ծնունդ առած ընկերային զիտութիւնները կընան մարդկութիւնը առաջնորդել իրենց խոստացած երջանկութիւններուն: Գէթ ասիկա այսպէս է ցարդ իրազործուած արդիւնքներու լոյսին տակ:

Մեծ Պատերազմը, և անոր յաջորդ վերիվայրումները ցոյց տուին թէ ընկերային այդ տեսութիւնները ոչ միայն կեանքը դեկավարելու կարող եւ ճշգրիտ չափանիշներ չեն, այլ նոյն իսկ նուազ արդիւնաւոր քան իմաստասիրական այն դրութիւնները, որոնց ընդդէմ նոր խոստումներու կարգախօսը եղած էին: Մարդը հակառակ իր ազնիւ յատկութիւններուն և ուժերուն, կը պահէ գեռ իր վրայ կնիքը ստորին ընազիներուն, որոնք ընկերային տեսութիւններով և դրութիւններով չէ որ պիտի սրբազրուին:

Կընան մարդիկ պայքարի յանուն ուամկավար սկզբունքներու, ինչպէս կը կարծուի ըլլալ պարագան Մեծ Պատերազմին, և այս նոր սարսափին. ուրիշներ կընան զայն նկատել դասակարգի, ցեղի և ազգերու դոյցութեան և տկականաց-

ման պայքար, և տւելի իրատեսներ՝ տնտեսական պայքար։ Ատոնցմով ճշգրած կ'ըլլանք իրողութիւններ միայն, որոնք սակայն ինքնին չեն արդարացներ այն միջոցը, պատերազմը, որով մարդիկ կը կարծեն լուծել այդ հարցերը։ Ոմանք այս և նման չարիքներու պատճառը կ'օրոնեն նիւթական արժէքներու հետապնդման, և բարոյական ու հոգեոր արժէքներու ուրացման մէջ։ ասիկա ակնբաց իրողութիւն մըն է անշուշտ, և սակայն ոմանց այս մտածումը չի մատնանշեր աւելի խոր պատճառները։ Մարդիկ միշտ պէտք ունեցած են այդ նիւթին իրք հարկաւոր նեցուկ իրենց տեսականացման։ Վերոյիշեալ բոլոր պատճառներն այ առաւել կամ նուազ չափով իրողութիւններ են, և կրնան մարդերն ու ազգերը տագնապեցնել առանց անհրաժեշտաբար առաջնորդելու սակայն զանոնք պատերազմի արիւնոտ սարսափին ու ոճիրին, եթէ ընկրկումի և նահանջի մէջ չըլլար Քրիստոնէական ողին, և դասական մշակոյթը դարերու, որ կը պատմուճանէր այդ ողին։

Կ'ըսենք այսպէս, վասնզի կը հաւատանք թէ վերջին երկու պատերազմներու ընթացքին հաստատուած անզթաւթեանց քանակը և որակը ախտանիշերն են մարդկութեան բարոյական խոր արժէքրկումի մը։ Կ'ըսենք այսպէս, վասնզի չենք հասկնար թէ ինչպէս ողջ ժողովուրդներ, շեն երկիրներ, մէկ օրէն միւսը կը փճանան ու կը վերածուին աւերակներու։ Ասիկա այլևս անասնական բնագդի մը վերբռնկումը չէ քսաներորդ դարու քաղաքակրթութիւն որակուած խղճմը-տանքներու մէջ։ ասիկա արդիւնք է հոգեկան խորունկ այլացումի մը, աւելի անզութ բառով՝ այլասեռման։

Անոնք որ աշխարհը կը կառավարեն այսօր, եթէ ոչ դաւակները, զեթ թոռներն են այն մարդոց որոնք դարձեալ աշխարհներ կառավարեցին, ըրին թերես նախնիքներ, բայց կեցան խորվեալ հողիով պատկերներու առջե, տեղերու մէջ, ուր կը պաշտուէր Աստուծոյ խօսքը։ Քրիստոնէական նահանջը հոգիներու մէջ ինչ պատճառներ ալ ունենայ, մեր կարծիքով կը մնայ զերազանց ազգակը ներկայ անկուր ովքերգութեան։ Այժմ ցեղերը կ'ոչըն-չացուին և սրբութիւններ կը վաճառուին, որովհետեւ սիրոյ և զութի զգացումը տկարութիւն կ'որակուի մեր օրերու իմաստուններէն։ Զենք ուղեր աւելի մանրամասնել, իրողութիւններ կան որոնց լոկ մատնանշումն խակ բաւ է։ Մարդիկ ունին յաւիտենական և ամէն ճշմարիտ յառաջդիմութեան առաջնորդ յարացոյցներ, երբեմնի դասական մշակոյթը զանոնք իրենց ծաղկումին հասցուցած՝ կը հաւատար անոնց դերին. այժմու ոչնչապաշտ վարդապետութիւններ կ'ուրանան այդ բոլորը։

Աշխարհը չորս տարիներ անընդհատ արիւնով թաթիսուեցաւ, որոշելու համար թէ ո՞վ պիտի ունենար աւելի մեծ ածու մը, և աւելի լեցուն քսակ մը, բայց ոչ ոք օգտուեցաւ այս զարհուրելի փորձառութենէն։ Առեստուրի առնունով շարունակուեցաւ վաշխառութիւնն ու զրաւումը, ժողովուրդներ քաղաքակրթելու նպատակներով աւելի կ'ամրացուին անոնց զերութեան շղթաները։ Տիսուր է այս բոլորը յիշել ու յիշեցնել մարդոց, որովհետեւ անոնք տարրեր չափանիշերով կը նային արժէքներու։ Տիսուր է անհամերաշխ և անձնակեղրոն հոգիներու այս բարելոնը, անձէ դէպի անձ այս յուսի շրջանը։ Տիսուր է աեսնել զաղափարներու և շահերու այս ալէկոծումին մէջ մարդուն լաւագոյն կէսին՝ հո-

զիին նաւաբեկութիւնը։ Մինչև որ չմեռնի ազգերու գոռողութիւնն ու ինքնասիրութիւնը, մինչև որ չմեղմանայ անհատներու մէջ եսասիրութիւնն ու նիւթապաշտութիւնը, ոչինչ կընայ իրականանալ իրբեւ իրապէս մեծ ու գեղեցիկ։ Լեզուները խառնուած են այժմու աշխարհին մէջ, վասնզի նահանջի և ընկրկումի մէջ է Աւետարանի ողին, և աշտարակը, այսինքն մարդկային քաղաքակրթութեան շէնքը անկատար կը մնայ, եթէ Քրիստոնէական ողին չիշմէ ազգերու։

Իզուը գիտութիւնը, և մեր օրերու ընկերային դրութիւնները կը փորձեն իրենց համար անկարելին, որ կարելին է սակայն այլապէս։ Տխուը բան է փոքրել և մեր չափերուն իշեցնել իրողութիւններ օրոնք վեր մնալու սահմանուած են, ինչպէս կ'ընեն մեր օրերու մարդարէները, վասնզի չեն կընար տեսնել աշխարհ եկող լոյսին մռայլ գեղեցկութիւնը, չահի մը պէս բռնուած մեր ողբերգութեան վեր։

Խաղաղութիւն եւ յառաջդիմութիւն, որոնց անուններով կ'երդուելին գեռ երէկ մեր օրերու վարիչները, իրապէս և տեսականօրէն այն ատեն միայն կընան իրականանալ, երբ հողիններու մէջ ծաղի Աւետարանի լոյսն ու խաղաղութիւնը, երբ բոլորը խանդավառուին նոյն զաղափարներով, Աստուծոյ հայրութեան և մարդկային եղբայրութեան նոյն իտէալներով։

Սակայն հակառակ շարունակուող պատերազմին, եւ ամիսներէ ի վեր հոսող արիւնին, մեր յոյսը թէկ տկար, տակաւ կ'առկայծի, ի տես առաջին, թէկ մասնակի, խաղաղութեան դաշնքի մը, որ երաշխիք մը կարելի է նկատել մեր այն յոյսին և վստահութեան, թէ աշխարհ զէթ այս անզամ պիտի համոզուի թէ վերջին միջոցով, զէնքով, չէ որ պիտի կարգադրուին հարցերը, եւ մեղմուին տագնապները։ Այս պարագան առանց շատ լաւատես ըլլալու, կ'ուզենք փաստ մը նկատել խաղաղութեան եւ համերաշխութեան տեսչի ամբողջ աշխարհի համար։

Որքան տեղին է կրկնել «Երանի խաղաղաբարաց»։ իցիւ թէ անզամ մը ևս հնչէր այս պատգամը հոգիններուն մէջ, փրկելու մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը արիւնոտ սարսափներու մղձաւանջէն ու աւերէն։ Առանց պահանջուած խաղաղութեան, կարելի չէ աւարտել քաղաքակրթութեան աշտարակը, տանելու համար մարդկութիւնը լաւագոյն ու աստուածային յարացոյցներու ճամբով։

Այս անզամ զէթ իրանար ու ըմբոնելի ըլլար այս ճշմարտութիւնը։

ԽՄԲ.



ԿՐՈՆԱԿԱՆ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ...

«Հետեւարար դատավարութիւն չկայ անմանց համար առնի՞ ի Յիսուս Քրիստոս են, որոնք կ'ասցին ոչ թէ բայ մարտնի, այլ՝ բայ նորույ: Մրամինեւ նպայուն օրէնքի, որ իր ենք կը բերէ այն կեանքի որ Քրիստոս մէջն է, ազատած է զիս մեղքի եւ մահանան օրէնքն»:

(ՀՈՒՄ. Ը. 1-2)

Աւելի լաւ հասկնալու համար «զատապարտութիւն չկայ» խօսքին իմաստը, նախ պէտք է զիստնալ թէ ի՞նչ կը նշանակէ սի Յիսուս Քրիստոս բացատրութիւնը:

«Ի Քրիստոս» եղբը շատ գործածական է Պողոս Առաքեալի թուղթերուն մէջ: Հաշիւ եղած է որ շուրջ ուժուուն անգամ գործածուած է այդ բառը անոր զրութեանց մէջ: Սակայն այս եղբին սադմը կը գտնուի Քրիստոսի սա խօսքին մէջ: Կացէք լիս, եւ ես ի ձեզ» (Յովհ. ԺԵ. 4):

Ուշացիր քննութիւն մը Ս. Գրոց այլևայլ հատուածներուն, որոնց մէջ կը հանդիպինք այս եղբին, պիտի ցուցնէ որ այ Քրիստոս բացատրութեան մէջ արտայայտուած ճշմարտութիւնը երկու որոշապէս տարբեր երեսներ ունի. մին կը վերաբերի արդարցման (justification), միւսը՝ սրբացման (sanctification): Կանխենք ըսել որ մինչդեռ այս եղբը երարմէ կը զատորոշենք, սակայն չենք կրնար զանոնք իրարմէ բաժնել: Մին միւսին լրացուցիչն է: Կայ «ի Քրիստոս կիցուածք մը, ու կայ նաև «ի Քրիստոս» ապրիլ մը կամ փորձառութիւն ունենալ մը: Առաջին պարագային Քրիստոսը մեր Պետք կը ճանչնանք, կ'արդարանանք. երկրորդ պարագային Անոր հետ անձնական հաղորդակցութեան մէջ կ'ըլլանք, կը սրբանանք:

Մարգոցմէ մէն մի անհատ իբրև գըլխաւոր ունի կամ Ս. Գամը կամ Քրիստոսը: Սատուծոյ Տնօրինութիւնները կը վերաբերին երկու մարգոց — Առաջին ու Վերջին Աղամին. նախամարդուն ու Քրիստոսի: Ամբողջ մարդկային ցեղին գլխաւորն էր Ս. Գամ. (Մարդկութիւնը պէտք չէ նկատել զատ զատ անհատներու գումարութիւն մը — նման քարակոյափառ մը —, այլ՝ իբրև գործարանաւոր միութիւն մը — նման ծառին կամ

օրեւէ գործարանաւոր մարմինին —, որ թէն անթիւ մասկերէ բազկացած՝ բայց մէջ ամբողջութիւն մը կը կազմէ): Աղամին մէջ ուրիմ պէտք է տիսնել մարդկային ամբողջ ընտանիքը համազրեալ. ըստ այնմ ևս՝ պէտք է լնգունիլ որ իր մէջ ամբողջ մարդկային ցեղը, և ոչ լոկ Աղամը իբրև սոսկական անհատ մը, փորձի կ'ենթարկուի: Մենք մէջնքս, ադամորդիներս, իր մէջ ներփառուած էինք, երբ ան աստուածային չնորհաց հազորդ կ'ըլլար և կամ փորձի կ'ենթարկուէր: Իր անկումը ամբողջ իր սերունդին անկումը եղաւ. «Մէկ մարզումեղքը աշխարհ մտաւ, ու մահը՝ մեղքով. այնպէս որ մահը տարածուեցաւ բոլոր մարդոց վրայ, որովհետեւ ամենքն ալ մեղանչեցին [Աղամին մէջ]» (Հոռմ. Ե. 12): Մեր, այսինքն ամբողջ մարդկութեան, փորձը վերջացաւ Աղամին ձախողութեամբը: Աւետարանը, այսինքն Քրիստոս և իր փրկարար տնօրինութիւնները, կուգայ այսպիսիներուն, այսինքն փորձուած ու ձախողածներուն. այլ խօսքով կորսուածներուն: Եւ ի՞նչ է արգէն Քրիստոնէութեան նպատակը. մարդուն ուրիշ պատեհութիւն մը տալ. զայն կրկին անգամ փորձել. երբեք. որովհետեւ պէտք չկայ, մէկ փորձը բաւական եղած է: Քրիստոնէութիւնը չի գար մարդը կրկին անգամ փորձելու, այլ՝ փրկելու:

Աղամէն ժառանգուած այս վիճակը վերանորոգելու մեր ջանքը կը նմանի՝ մեռեալ ծառի մէն մի ճիւղին մէջ կեանքը վերակենդանացնելու ամուլ ճիզին:

Աւետարանը կը պատգամէ նոր ստեղծագործութիւն մը, նոր ծառ մը, միացած նոր արմատի մը, պատռաստուած նոր բունի մը վրան. «Եթէ մէկը ի Քրիստոս է. անիկա նոր արարած մըն է» (Բ. Կորնթ. Ե. 17): Ասիկա հինը վերանորոգել չէ, այլ անցնիլ մը՝ նոր դիրքի:

Օրինակի համար. ենթագրենք որ սա մարդը գործի մէջ սնանկացած մըն է. ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը. — իր վարկը կը կոսրի և իր անունը կ'անպատռուի. իր ամբողջ ճիզերը վերականգնելու իր նախկին զիրքը բոլորվին ապարդիւն են. անյոյս են այդ ուղղութեամբ տարած իր բոլոր ջանքերը. բայց յոյսի նշոյլ մը կը ծագի տարբեր ուղղութեան մը մէջ: Ենթազրենք գարձեալ որ

այս մարդը իբրև գործի ընկեր կ'առնուի մէկէ մը որուն անունը ի պատուի է վաճառականական հրապարակի վրայ. այս կերպով ինք ընկեր կ'ըլլայ հարուստ և զատահեթ վաճառատան մը. ու հետեանքը — իր պարտքերը կը տրուին, այդ վաճառատան կողմէ, անցեալը կը մոռցուի, ու մարդը բոլորովին նոր զիբքի մը կը տիրանայ: Իր հին անունը մէկ կողմ՝ կը դրուի, կը մոռցուի ու կը թաղուի: Հիմակ ան նոր անուն մը ունի: Այդ նոր անունով կը վարէ իր բոլոր գործերը:

Հօս ունիք շատ աղօտ մէկ օրինակը ինչ որ կ'ընէ Քրիստոնէութիւնը մարդուն. ուրիշ խօսքով ինչ որ կը նշանակէ ոի Քրիստոս» ըլլալ: «Քրիստոսի հաւատացող ըլլալ կը նշանակէ հին վիճակէն անցնիլ ու բոլորովին նոր գետնի մը վրայ կենալ: Ով որ մկրտուած է այսուն Տեառն», անիկա ոփ Քրիստոս» է: Հետեարար՝ «Զկայ դատապարտութիւն անոնց» որոնք ի Քրիստոս Յիսուսու են: Ասիկա հաւատացեալին աստիճանաբար եկող մենաշնորհ մը չէ, այլ՝ մէկ անգամէն: Ու այս վայրկեանին որ այս մէկ վիճակէ զէպի միւսը փոխանցում մը տեղի կ'ունենայ, այդ վայրկեանէն հաւատացեալը արդէն խոկ փրկութեան կամ փրկուածներու շրջանակին մէջ կը գտնուի, «ի Քրիստոս» կ'ըլլայ:

Այս ճշմարտութիւնը հիմնական է: «ի Քրիստոս» կենալը հիմքն է ամէն գործնական աստուածապաշտութեան և քրիստոնէական ծառայութեան: Պէտք է սկսիլ այս, այսինքն «ի Քրիստոս», գետնի վրայ, այլապէս ոչ մէկ գործնական քայլ կրնանք առնել սրբացման ճամրուն մէջ:

Սակայն այս չէ միայն «ի Քրիստոս» բացարութեան իմաստը. այլ անոր մէջ կայ նաև, ինչպէս ակնարկուեցաւ, Քրիստոսի հետ միասնաբար ապրելու իմաստը:

«ի Քրիստոս» ըլլալ այս պարագային կը նշանակէ ունենալ ներքին գիտակցութիւն մը որ վկայէ իրեն թէ ինք Անոր առջև շնորհ գտած է: Ասիկա ոչ թէ կեցուածքի խնդիր է, այլ՝ փորձառութեան: Մեզի միշտ կը յանձնաբարուի «կալ ա ի Քրիստոս»: Այսինքն անոնք որ իրենց դիրքը գրաւած են ի Քրիստոս — արդարացած են — անոնց կը պատուիրուի մալ, բնակիլ ի նա սրբացման համար: «ի Քրիստոս մալ»ը, որ պայման

է մեր սրբացման, շարունակ յորդորի նիւթէ է ն. Կատակարանի մէջ:

Կարելի է, սակայն, ու գժբախտաբար չի մալ ի նա: Ու ի՞նչ կը պատահի երբ հաւատացեալը գագրի ի Քրիստոս մնալէ: Այս տանը ան կ'ապրի Եսի կեանքը, արդարն կայ Եսի կեանք ըսուած բան մը նոյնիսկ Քրիստոնէութեան մէջ: Ու ասիկա կարծուածէն աւելի տարածուած կեանք մըն է, նոյնիսկ անոնց մէջ որոնք հասած են Քրիստոսի փրը կարաք ճանաչումին: Վասնզի կրնայ են իշական յատակ հասկացողութիւնը ունենալ թէ ի՞նչ կը նշանակէ «ի Քրիստոս» ըլլալ արբացման համար: Բայց կրնայ իր ըմբանողութիւնը շփոթութեան մատնուած՝ ու խաւարին մէջ ըլլալ երբ խնդիրը կը վերաբերի հասկնալու համար թէ ի՞նչ կը նշանակէ «ի Քրիստոս» ըլլալ սրբացման համար: Շատ շտաբը հետամուտ են Քրիստոսի փառաւորման, և իր տիպարին վրայ կերտուելու անկեղծ ու պարկեցտ փափաքն անին, և կ'ընեն կորովի ճիգեր սուրբ կեանքի մը տիրանալու համար, և սակայն անոնք մշտական ծախողանքի ու պարտութեան կը մատնուին: Ոչ թէ որովհետեւ պէտք եղած կերպով չեն մաքառիր, այլ որովհետեւ կեանքը զոր կ'ապրին Եսի կեանէ մըն է և ոչ՝ Քրիստոսի կեանել:

Անոնք դատապարտութեան ներքեւ են: Ասիկա կը հետեւի այն իրողութիւնէն թէ, ամեղքի օրէնքը» իրենց մէջ աւելի հզօր է քան վերանորոգեալ բնութիւնը:

Հոգի մը որ զագրած է ի Քրիստոս մնալէ, կ'ապրի «ես ինձի» կեանքը: «Անոնց՝ որ ի Քրիստոս են» խօսքին կը հակադրուի «ես ինձի մնացած» բացարութիւնը:

«Ես ինձի» կը նշանակէ զուրկ մնալ այն օժանդակութիւնէն զոր հաւատացեալը պիտի սունար Քրիստոու: «Ես ինձի մնացած», կ'ըսէ Առաքեալը (Հոռվմ. է. 14-25), «առարկայ կը զառնամ ներքին ողբալի պայքարի մը, երկու հակառակ ձգումներու, երկու բնութիւններու միջև. մին հակամէտ է բարիին, զոր կը սիրէ, որուն կը բազայ և զոր կ'ուզէ իր մէջ իրականացած տեսնել: Միւսը՝ զիս կը մզէ հակառակ ուղղութեան, և, երկուքին մէջ աւելի զօրաւորը ըլլալով վերջինը, զիս կ'առաջնորդէ մեղքի գերութեան, ու այսպէս վրա դատապարտութիւն կը հրաւիրէ: Այս դատապարտու-

թիւնը կը վերցուի Քրիստոսի արիւնով, ու , հաւատքով : Սակայն եթէ, ասկէ ետքն ալ, մեղքը կը շարունակէ տիրակալել հոգիին, ինչ որ կրնայ պատահիլ դժբախտաբար, դաւապարտութիւնն ալ բնականաբար անխռուսափելիօրէն կը վերանորոգուի : Որովհետե Յիսուս չէ եկած զմեղ փրկելու սի մեջուս, այլ՝ «ի մեղաց», ոչ թէ մեղին մեջ, այլ՝ մելին: Թողութիւնը չէ որ հոգիին առողջութիւն կը բերէ, այլ փրկութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ սրբութեան վերանորոգումը: Թողութիւն ստանալը չ'ապահովեր մեր Աստուծոյ նմանիլը. սրբութիւնն միայն է որ զմեղ Աստուծոյ նման կ'ընէ: Թողութիւնը լոկ գաւիթն է փրկութեան. միջոցը՝ որով ապաքինումը կը սկսի: Առողջութիւնը սրբութիւնն իսկ է:

Ուրեմն, եթէ մեր գլուխէն վերցուելիք առաջին դատապարտութիւնը մեղքի դատապարտութիւնն է իբրև յանցանէ, երկրորդը, որ անհրաժեշտաբար պէտք է վերցուի, որպէսզի առաջինը չի վերադառնայ, դարձեալ մեղքն է, այս անգամ իբրև զօրութիւն, այսինքն իբրև կամքի կամակոր ձգտումը գէպի մեղք: Ու այս վերջին դատապարտութեան վերացումն է որուն մասին կ'ակնարկէ Պօղոս Առաքեալ երբ կ'լսէ. «Հոգիի օրէնքը որ իր հետ կը բերէ Քրիստոսի կեանքը, ազատեց զիս մեղքի ու մահուան օրէնքէն»:

Ակնարկուած «ես ինծի» կեանքին մէջ չար հակումը գերադաս է. այնպէս որ թէկ նոր բնութեամբ, ներքին մարդով, կամ միտքով մենք կը ծառայենք Աստուծոյ օրէնքին, այսու հանդերձ մենք տիրակալուած ենք՝ ու իրականին մէջ ենթարկուած՝ մեղքի գերութեան: Այսպիսի կեանք մը անհրաժեշտաբար դատապարտութեան արժանի կեանք մը կ'ըլլայ:

Սակայն ուրիշ յատկանիշ մը ևս ունի այս Եսի կեանքը: Անիկա էապէս, այսինքն խորքին մէջ, մարմնական է (σάρκινος), այս բառին ոչ թէ չվերածնած իմաստով, այլ «աշխարհիկ քրիստոնեայ» արդի առումով. այսինքն հաւատացեալներ որոնք ամբողջապէս կապուած են աշխարհին ու չեն ենթարկեր իրենք զիրենք այն Հոգիին Որմէ երբեմն ծնած էին, իրենց քրիստոնեայ մը կրտութեան միջոցին: Այսպէս որ ակնարկուած «մարմնաւորը» կրնայ ծնած ըլլալ

Հոգիէն, սակայն պէտք եղած չափով չէ ենթարկուած Անոր լուսաւորիչ ու սրբարար զօրութեան՝ յաղթելու համար մարմին հակառակ ու թշնամի բերութերուն. այդպիսին տակաւին կը խորհի, կը զգայ, կը դատէ ու կը գործէ օքատ մարմոյ»:

Այն վիճակը որ կը ներկայացուի ամառամաւոր» բառով, կրնայ արդիւնք ըլլակա՞մ նորագարձին ի հոգեսորս անչափահար ըլլալուն, և կա՞մ անկումին՝ որուն մէջ զլորած է արդէն իսկ ըստ բաւականին զարգացած քրիստոնեան: Առաջին վիճակին համար ոչ մէկ մեղադրանք կարելի է ընել, վասնզի ամէն ոք պէտք է անցնի այս վիճակէն՝ բնականին գէպի գեր-բնական յառաջընթացութեան մէջոցին: Բայց երկրորդը գատապարտութեան ներքեւ կ'իյնայ:

Այս է արդարեւ պատկերը ամէն քրիստոնեային, նոյնիսկ առաքեալի մը, երբ նկատի առնուի անիկա՝ այնպէս ինչպէս որ է իննի իր մէջ: Այսպէս է նաև փորձառութիւնը այն քրիստոնեային որ Քրիստոսի ընկերակցութեանէն կամ հաղորդակցութեանէն գուրս կ'ապրի: Մարմնական սկզբունքը աւելի զօրաւոր և գերադաս է իր մէջ: Ան այլես չէ հոգի, չունչ, մարմին, այլ՝ մարմին, չունչ, հոգի. կարգը շրջուած է, ստորնագոյնը տիրական դարձած ըլլալով:

«Ի Քրիստոս» ըլլալ՝ Անոր հետ հաղորդակցութեան համար՝ կը նշանակէ անհատական մարդկային ոգին անգործութեան մատնել Աստուծոյ Ս. Հոգիովը: Այս կերպով ոչ միայն ներգաշնակ յարաբերութիւն մը կը ստեղծուի մեր և Աստուծոյ միջն, այլ՝ կը զօդուինք Աստուծացին զօրութեան: Այն կարողութիւնը, որ կը պակսէր մեղքի երբ կը պայքարէինք մեր ստորին հակումներուն գէմ Եօի կեանք վարած միջոցին, այլես պիտի չպակսի Քրիստոսէ մեղքի հաղորդուած կեանքին մէջ: Այս է մեղքի և մահուան օրէնքէն ազատ ըլլալը:

Ամէն ոք որ «ի Քրիստոս» է, գիտէ գործնական փորձառութեամբ թէ ի՞նչ կը նշանակէ դադրիլ Քրիստոսի մէջ մնալէ:

Հաւատացեալին մինաշնորհն է գիտնալթէ այլես իրեն համար ոչ մէկ դատապարտութիւն կայ, ըլլայ Աստուծոյ մասին զատաւորի գաղափար ունենայ, ըլլայ՝ Հօրմը: Այս կերպ ապրելով ան գիտէ թէ ի՞նչ է Աստուծոյ հաճոյ ըլլալու երջանկութիւնը:

Անտառակոյս հոգիի այս վիճակին է որ Յովհաննէս առաքեալ կ'ակնարկէ երբ կ'լուէ. «Սիրելիներ, եթէ մեր սիրտերը զմեզ չեն դատապարտեր համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ հանդէպ» (Ա. Յովհ, Գ. 21):

Հետեարար առ մէկ զատապարտութիւն կայ անոնց որ ի Քրիստոս են — անոնց՝ ուրոնք ի միութեան բերուած են Անոր հետ, ոչ միայն պատօնապէս, իրրեւ յայտնապէս քրիստոնէութիւնը զաւանողներ, այլ նաև վորձառապար: Եւ Առաքեալը կուտայ պատճառը այս երանելի վիճակին, առ բառարով. առովինեւ հոգիի օրէնքը, որ մեզի կը տրուի Քրիստոս Յիսուսով, ազատած է զիս մահուան ու մեղքի օրէնքէնց: Այս միութեամբ մենք կը տիրանանք ազատադրեալ վիճակի մը: Հաղորդ կ'ըլլանք ալատարար զօրութեան բարիքին: Փրկութիւնց այն ատեն կ'ըլլայ ազատազրում մը մեղքէն, ոչ լոկ անցեալի մէջ կատարուած ակտով մը, այլ օրէնքով մը որ ի զօրու է ներկայիս. օրէնքով մը որ երբեք չի զադրիր ի զօրու ըլլալէ: Հաղորդակցութիւն Քրիստոսի հետ, միութիւն սրտի և մտքի Անոր հետ, կ'առաջնորդէ հոգին ոլորտի մը մէջ, ուր բոլոր յաղթական բարիքները այս օրէնքին՝ իրեն կ'ըլլայ: Հո՛ս, որ Քրիստոս Յիսուսն, ու միայն հոս է որ այս բաղադրի ազատութիւնը կրնայ ճամփառուիլ ու իրագործուիլ: Ինչ որ ենք արտախոյ այս շըջանակին, իրրեւ ի հայելով կը տեսնենք Հոսվիմ. Թուզթին է. գլխուն 14-24 համարներուն մէջ*. իսկ թէ ինչ ենք ի նա, այսինքն իր ներկայութեան շըջանակին մէջ, կը սորզինք նոյն թուզթի ը. գլխուն մէջ:

Այս կերպով հաւատացեալին կը յիշեցուի այն խոր ճշմարտութիւնը որ կը պարունակուի նոյնինքն Տիրոջ արտասանած սա հակիրճ, բայց բեղուն նախադասութեան մէջ. և Առանց ինձին կամ ինձմէ դուրս, ուչ մէկ բան կրնաք ընել» (Յովհ. Ժե. 5). այսինքն առանց ինձի հետ միացած ըլլալու, նոյնիսկ զիս ձեր Տէրը և Փրկիչը ճանչնալէն ետքն ալ, արդիւնաբար ու մնայուն արժէք ներկայացնող ոչ մէկ գործ կրնաք ընել: Կը կրնանք, խեղճ ու անբաւարար մեկնութիւն է «առանց իմ» բառերուն տալ նշանակութիւնը «չէք կրնար ընել ոչինչ

մինչեւ որ իմ մէջս չըլլաք, և իմ չնորհն չաւնենաք»: Այլ աւելի՝ «իմ մէջս ըլլալէ վերջն ալ ոչինչ կրնաք ընել: Եթէ ինձմէ կեանք ու զօրութիւն չսանամ...: Սկզբէն մինչեւ վերջը ե՞ս է որ պէտք է գործեմ ձեր մէջ ու ձեր միջացաւ...».

Երկաթթի կառը մը եթէ կարենար խօսիլ պիտի բսեր. ձես սե եմ, ես ցուրտ եմ, հսկարձը եմ: Սակայն զի՞ր զայն հնոցին մէջ, և ի՞նչ փոփոխութիւն յառաջ կուգայ: Ան չի զադրիր երկաթ մասէ, սակայն սեռութիւնը, ցրութիւնը, կարձրութիւնը կ'երթայ: Նոր վիճակի մը մէջ կը մտնէ, կրակը և երկաթը երարմէ տարորու են տակաւեն, սակայն ուրչափ կատարեալ է միութիւնը երկուքին միջնէ. երկուքը մէկ են: Եթէ երկաթը կարենար խօսիլ՝ իր կերպարանափոխութիւնը իրեն պիտի չվերագրէր ու անով պիտի շպարծենար. այլ այդ պայծառակերպութիւնը պիտի վերագրէր կրակին, որ զինքը փալիլուն զանգուածի մը կը լերածէ ու այդպէս կը պանէ: Այսպէս պէտք է ըլլայ նաև հաւատացեալին համար:

Հարցուր այս անդամ հաւատացեալին թէ ի՞նչ է ան ինքն իր մէջ: Պիտի պատասխանէ. «Մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ եմ, մեղքի գերին եմ»: Արդարեւ թէ մարդ ինքինքին ձգուի՝ այս վիճակը անխուսափելիօրէն կը հետեւի: Անիկագերութեան ներքեւ կ'իյնայ մեղքի օրէնքին որ իր անդամներուն մէջն է: Սակայն նոյն ատեն իր մենաշնորհն է Քրիստոսի հետ հաղորդակցութեան մտնել ու բնակիլ Անոր մէջ: Եւ հո՛ս, Անոր մէջ, որ մեր կեանքն է, մեր սրբութիւնը, մեր զօրութիւնը, Անոր մէջ, որուն Հոգին կրնայ թափանցել մեր էութեան ամէն մասներուն մէջ, հաւատացեալը ալլեւս մարմնաւոր չէ, այլ հոգեւոր. այլեւս չի պարտուիր մեղքէն ու անոր գերին չ'ըլլար, այլ կ'ազատի մեղքի ու մահուան օրէնքէն և կը պահուի ազատութեան վիճակի մը մէջ: Մեղքի ծառայութենէն ու զօրութենէն ազատագրուելու այս բաղադրի փորձառութիւնը կ'ենթագրէ վայրկենական բայց նոյն ատեն շարունակական ակտ մը ի Քրիստոս բնակութեան: Այս վիճակին մէջ հաւատացեալը չի կրնար պարծենալ ստացուած (և ոչ թէ շահուած կամ տիրակալուած) սրբութեան վիճակով: Կը նմանի

* Տե՛ս գրութեան վեցը:

ակնարկուած երկաթի կտորին։ Այն վայրկեանին որ երկաթը հնոցէն դուրս կը քաշուի, սեւութիւնը՝ ցրտութիւնը և կարծրութիւնը կը սկսին վերադառնալ։ Ոչ թէ երկաթին կողմէ մի անգամ ընդ միշտ զործուած ակտով, այլ կրակին ամեն վայրկեան ու շարունակաբար կատարած ներգործութեան շնորհիւ է որ երկաթին դէպի իր բընական վիճակին վերագառնալու ձգուումը կ'արգիլուի։

Այսպէս է ազատութեան օրէնքը հոգեւոր կեանքին մէջ. կրնանք այս ինքով հասկնալ՝ թէ ինչպէս կարելի է մեղքի օրէնքէն ազատազրման փորձառութիւն մը ունենալ, ու նոյն ատեն չկորօնցնել խոր գիտակցութիւնը մեր բնութեան եղծուած ըլլալուն. ուրիշ խօսքով՝ վարել յաղթական կեանք մը և ունենալ նոյն ատեն ամենէն անկեղծ խռնարհութեան հռգի մը։

Հայացուց՝ Ն. Ա. Բ. Շ. Ա. Ց.

ՔԵ Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԸ ԱՐՏԱՔՈՅ ՔՐԻՍՏՈՒ

«Թիսենք քէ օրէնքի հոգեւոր է. սակայն Խ մարմաւար եմ, մեղի գերութեան տակ ինկած. որպիսեւ ինչ որ կ'ընեմ չեմ զիտեր. չեմ բներ այն ինչ որ կ'ուզեմ բնել, այլ բնինակուալի, ինչ բան որ կը խորհի զայն կ'ընեմ։ Արդ, երէ չուզած բանն է որ կ'ընեմ, առոյ իսկ կը վիստիւ որ օրէնքի յա բան մըն է։ Արդ, և չեմ որ կը փորձեմ իմ չուզած, այլ իմ մէջս բնակող մեղի։ Օրդինեւ ևս զիմեն որ իմ մէջս, այսինքն իմ մարմաւար մէջ, ոչ մէկ բարի բան կայ։ Արդաւեւ փափաքր ունիմ բարի նկատած բանը բնիւր, բայց զուրիմիւր չունիմ։ Վասնի բարին՝ զար կը փափաքրի բնել, չեմ կրնա բնել. այլ չուզած բան է որ իմ առշեւ կ'ելլէ։ Ներքնապէս համամիտ եմ Ասունոյ օրէնքի կատարելու, սակայն կը հանդիպիմ իմ առանձիւնու մէջ ուրիշ օրէնքի մը որ կը պայտարի այն օրէնքի դէմ որուն նետ ես համամիտ եմ, ու զիս գերի կը դարձեմ մեղի օրէնքին որ իմ անդամներուն մէջ է։ Ուրեմն ես ինձի ձգուած՝ միքոյ Ասունոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմաւար մէնի օրէնքին։ Թուառ մարդ մըն եմ ես. ո՞վ պիտի ազատ զիս մանափր այս մարմիւր։ — Ասունած։ Փառք երես Յիսուս Քրիստոսի միջոցաւ։»

(ՀՈՂԱԾ. Է. 14-25)

ՀԱԿՈՒՄԸ (1)

Մերթ լոյսի և մերթ ստուերի պահեց կ'ընտրէ Եկեղեցին իր պաշտամունքներուն, թերեւս հպատակելով կեանքին իսկ պամանին՝ որ խառնուրդն է այդ երկուքին։ Ստորդ է ամէնուս համար որ այս անօրինութեան ծնունդ կուտան հոգեկան պատճառներ, եթէ նոյն իսկ շատեր անզիտակ եղած ըլլան այս իրողութեան և զայն վըրիպեցնեն ուշագրութիւնէ, անոնց ամէնօրինու սովորական հանգամանքին հետեւանքով։ Անոնք, այդ պաշտամունքները, ծընունդ ապին կրօնքին հետ և կեանքին զուգընթաց՝ ծածուկ, առանձնական՝ աւելի ձիշ՝ առտնին ձեւերու ներքեւ, սարսափի և հալածանքի այն օրերուն՝ երբ արգիլուած էր անոնց հրապարակային հանգիստազրումը՝ մինչև Եկեղեցին ազատազրումը՝ պիտական կրօնք գառնալէն և գետնադարձաններն իր յարութիւն առնելէն յետոյ, որմէ վերջ, ան կ'ունենար իր տիրապետութեան չըջանը և վերջ կուտար այդ պաշտամունքի ձեւերուն զանոնք փոխանակելով հասարակաց պատամունքունուլ։ Երկիւղած հոգիներ՝ անշուշտ, երկար ատեն, որդեգրած էին ու կը կիրարկէին աղօթքի վազեմի սովորութիւնը՝ «Եօթն անզամ յաւուրն օրհնեցից զքեզօը, մինչև որ Եկեղեցին ստիպուեցաւ յարգել կեանքի պահանջները և զանոնք վերածեց Երկուէի կամ առաւելագոյն Երեմի, տօնական օրերուն անոնց կողորդելով Ս. Պատարագի խորուրդը՝ Եկեղեցին ասով չժխտեց առանձնական աղօթքին կարեռութիւնը սակայն, հասարակաց պաշտամունքին տուաւ զերակչութեան առաւելութիւն՝ վասնզի տարբեր զգայնութիւններ ու տպաւորութիւններ կ'ստեղծուին բազմութեամբ աղօթելուն մէջ, խոր և ցնցող հոգեկան զեղումներէն ուրիշներ ևս կ'աղցուին մեծապէս։

Այսպիսի պահերուն արտասանուած աղօթքներ և երգեցողութիւններ՝ սրտագին և զգացուած շեշտերով՝ յուզումի և վերացումի հոգեկան ալիք մը ստեղծեն որ վարակիչ կը դառնայ ամենուն, մինչ առանձնական աղօթքի մէջ մարդ սովորուած է զոհանալ միմիշայն իր ոյժերուն խանդավառութեամբ։

Եկեղեցին՝ այսպէս, ուժգին թափով

(1) Քարոզ՝ խօսուած Մարտ 26ին, Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ Հակոբի պահուն։

մը ուրեմն, կը սկսի լոյսի մէջ կատարել Տնօրինական խորհուրդը փառաբանող իր մէծ տօները՝ Տաղաւարները, իր իր յաղթանակին փառաւորումը, մեծավայելուչ ու փառահեղ, հանգիստական շքեղանքով հաւատացեալներու ներկայութեան եւ աշխարհի աչքին։ Այս հանդիսութիւնները աւելի փառաւոր ընծայելու համար չէին խընայուեր անշուշտ, ոչ թագաւորներու եւ իշխաններու, ոչ իսկ հարուստներու և հաւատաւոր ժողովուրդին մեծագին ընծանենքը։ Նուէրներով մասնակցիլ այս հոգեսոր խրախնաճիքի պերճութեան՝ անհէ միխթարութեան իր բաժինը առնելու համազօրքան մըն էր ամենուն համար։ Սակայն մինչ այսպէս, Եկեղեցին լոյսին մէջ կը հոչակէր իր յաղթանակին պանծացումը, իր մէծագոյն տօներով — չեմ ծանրանար ամէնօրեայ պաշտամունքին որ Աստուծոյ ներկայութեան թարմացումն է մեր մէջ, օրը սկսող և վերջաւորող տեղուութեան վրայ, մեզ մօտ բերելու մեր ճակատագրին տրտութիւնը և Աստուծոյ անհուն սփոփանքը — չի մոռնար նաև ստուերի մէջ կատարել հոգեկան ուրիշ տագնապներու դիմաւորման համար պաշտամունքի ուրիշ կերպ մը, որ, տարբեր զգայութեան և ապրումի արտայայտութիւնն է — Հսկումը։

Հսկումը, հին ատեն ոգեկան տագնապէ աւելի, ինչ որ կը կատարենք այսօր, համայնական պատուհաններու դէմ մատուցուելիք պաշտամունք մըն էր։ Հսկումի կը դիմէին բնագաւառներու մէջ, ո՞վ չի յիշեր — բացի Տաղաւարները կանխող նախօրերէն — երբ մէծ հեղեղ մը կը սպանար աւերել ամբողջ քաղաքներ և զիւղեր, երբ զօրաւոր երկրաշարժ մը հիմերէն կը սարսէր բնագաւառին մէծ մասը՝ աւերներու և կեանքերու կորուստին սարսափով, երբ համայնական երաշտ մը կը տիրէր աշխարհին մէջ՝ սովի ու սրածութեան մատնելով ամէնքը, երբ մէծ ու աղէտալի պատերազմի մը փոթորիկը կը փրթէր, այս բոլոր կործանարար ոյժերուն դէմ մարդիկ կը դիմէին Աստուծային օժանդակութեան՝ խընայելու աշխարհին և ազգաբնակչութեան այս մէծ աղէտները։

Ու գեռ կը դիմէին մարդիկ հսկումի, մեղքի ու սատանի սարդանքներէն ազատուելու համար՝ երկիւղալի տեհնգով մը, ա-

ղերսելով որ, երկնային գօրքերուն գունդը պահպանէ զանոնք անոր գէմ, ողորմազին շեշտերով, զիշերուան ստուերին ու լուսթեան մէջ։ Այդպիսի պահ մըն է ահա, որ, կը կատարենք, ու, կեցած սա ստուերոտ, աղօտալոյս կանթեղներու և մամերու պըլպւլացող լոյսերուն քաղցրութեան մէջ, ուր, ոգեղինացած են կարծես՝ անտեսանելի ու աներեսոյթ զօրութեան մը առջև, հաւատացեալները, և ուր, կարծես թէ կեցած ենք ամէնքս մեր մեղքերը խոստովանելու կորանքով՝ այլայլած ու լոին, մութին մէջ, ուրիշ զգայնութեան մը ազգեցութեան տակ։

Պահը կը խռովէ մեր էութիւնը, ու միսթիք բան մը կը հոսի մեր հոգիներէն ներս՝ որ պիտի չլեցուէր ուրիշ ոսէ զդաշյութեամբ, այն պահուն, երբ կը կարդացուէին սաղմոսներ, աղօթքներն ու մաղթանքները այնքան ողորմահայց և այնքան զուսպ որ կարծես թէ գային տառապանքին իսկ անդունդներէն, խորունկ և անկեղծ, Ամենակալին ուղղուած, արհաւերքի մը ազգարարութեամբ։

Ճեկեսցեազգ սկսած էր արդէն արդարին ու մեղաւորին սպորումը, ուր, առաջինը իր կեանքին լոյսը նկատած է Աստուծոյ օրէնքները չարին մեքենայութեանց, անիւրաւութեան ու ամբարտաւանութեան դէմ, ու, երկիւղով կ'աղերսէ Աստուծոյ պաշտպանել զինքը գիշերուան ու քունին խաւարին մէջ, որպէսզի առտուն արթննայ առողջ ու զոււրթ՝ փառաբանութեանց առաջադրութիւններով։ «Ճաւատով խոսնվանիմով կ'ընէ Մեծ Սուրբը — բաւ ըլլայ յիշել թէ այս սքանչելի աղօթքը թարգմանուած է քսան և չորս լեզուներու բատեղծելով նոյն սքանչացումը բուրրին մէջ — իր հաւատոյ գաւանութիւնը Ս. Երրորդութեան, կը խնդրէ ջնջել իր յանցանքներու ձեռագիրը, տալ իմաստութիւն իրեն, հսկել իր զգայարանքներուն և ուղղել իր զնացքը գէպի բարին, իր աջը հովանի ընէ իր վրայ քնանալու և արթննալու պահերուն, իր անձը Աստուծոյ կը յանձնէ հոգալու եւ պատրաստելու իր հոգեկան ու մարմնական կարիքները, կը հայցէ մոլորդները գարծի բերողէն փոխելու իր չար սովորութիւնները, իր աչքին առջև բեւելու մահուան սոսկալի օրը, գեհներին երկիւղը եւ արքայութեան սէրը՝ մեղքէն

զղջալու եւ արդարութիւն գործելու, կը փափաքի աւանդել իր հոդին բարի հրեշտակին ձեռքին մէջ, որպէսզի արդար զատաւորը փրկէ զայն յաւիտենական հոգեթէ, կը խնդրէ թողութիւն ամենողորմ Տիրօննէ իր թշնամիներուն և ատելիներուն իր գէմ գործած յանցանքներուն համար, աղօթեզով որ փառաւորեալ Տէրը ընդունի իր այս ազեկը սըբուր սուրբերուն բարիխօսութիւններով։

«Փառէ ենց Տէր Աստուած մեր ու ոչ միայն պիտի կնքուի հոկումի այս ոչնիան զեղումը այլ և պիտի խնդրուի Մարդաւէր Աստուածմէ այս օրը՝ բարի և խաղաղ անցընելու ու յառաջիկայ գիշերը՝ մեղքէն, չարիքէն ազատելու և դէպի բարին առաջնորդելու, որպէսզի արժանի ըլլան բոլոր հաւատացեալները առաւոտեան օրհնութեանց և փառաբանութիւններու, հայցելով որ խաղաղութիւն պարզեց աշխարհին և արարածներէն վերցնէ ցատումն ու պատուհաւը, ողորմի հայրերուն, եղբայրներուն և երախտաւորներուն, օգնէ քրիստոնեայ թագաւորներուն և իշխաններուն՝ անոնց զօրքերուն և զաւակներուն, անփորձ ու անխռով պահելու ընտրեալ առաջնորդն ու եղբայրութիւնը իր կոմքին ողորմութիւնով, և սուրբ նշանով հալածելու մեր սահմաններէն և բնակութիւններէն աներեսոյթ և երևելի թշնամին՝ փրկելով ամէնքը յաւիտենական հոգեթէ։

Ասոնք բոլորը, որոնք, տարբերը կը կազմեն հսկումին կը թուեմ նախ տարբարչելու իր նկարագիրը և յետոյ ճամբայ բանալու այն խոր ու տիրական ձայնին որ կուզայ լեցնել ու վերացնել հոգիները այս պահուս, միսթիք աղօթողին հզօր, ծաւալուն ու գերող չունչով։

Աղօթքը լեզու չունի ըսուած է, պիտի համարձակիմ ըսել թէ նարեկացին գտած է այդ լեզուն, վասնզի եթէ ան զգայնութեան մը վարակիչ թափին է որ ուրիշէ մը կ'անցնի այլոց՝ խոռվագիր և յոյզեր յառաջ բերելու հոգիներէն ներս, ինքնաբուխ ու յորդող, նարեկացին աղբերէն է այդ ըգգացումին։ Զարմանալի՛, հայ մամիկը կը հաւկընայ նարեկը, անով կը կապէ դեկը ու կը բուժէ ախտերը, մինչ զբարարագէտներ գժուարաւ կը լուծեն անոր ոճին ինքնայտուկ քերականական ճշգութիւններն ու խրինութիւնները, անիկա իր բժժանքի գիրքն է վարչամակուած՝ մերթ իր ծոցը,

մերթ սնարին ներքեւ, և մերթ ալ իր խոշցին ամենէն անմատչելի տեղը զբաւած իրը աւանդ որբազան։ Աղօթքի ու կեանքի իրականութեան բացուած է իր հոդին — ինչ փայթ եթէ պակսին անոր կեանքի մանրամասնութիւններ հետաքրիներու համար՝ միծ և վաւերական արժէքներ զիք են կեանքին — վանքի մը խուցերէն միոյն մէջ ուր, հոկած է ան ստէպ, տեսած, չօշափած ու չնչած է Աստուծոյ ներկայութիւնը, ամէն կոզմ։ Աստուծոյ հետ այս մշտական ապրումը առիթ տուած է իրեն որ ան մարմնաւորէ ու առարկայացնէ իր միտքին տեսութեան տոջեւ զԱստուծ, այդ բաւարարող, լիացնող ու ցանկալի ներկայութիւնին՝ խանզավառ ու ինքնամուռաց, չափէ մեղքին անզունդը ու ծածկատիւն աչքին առջեւ «քամէ ամբարուած թարախը իր վէրքին»՝ մեղքին։ Ոչ մէկ գրիչ աշխարհի միսթիք զբականութեան մէջ կրցած է այնքան լայնաշունչ ու բազմակերպ, այնքան անկեղծ և ուժգին ըստ պառել մեղքը բառերով որքան նարեկացին։ Ու եթէ երջանիկ հոգի մը կարենար տալ թարգմանաբար զայն աշխարհին՝ այդ ստեղծագործ ու ինքնատիպ հանճարը, տիեզերական արժէքներու կշիռին մէջ զրած պիտի ըլլար հայը իր ծանրագին ադամանդը իր հոգին տառապեցնող այդ փոթորիկը, որ, կ'ալեկոծուի մշտապէս իր մէջ, որ կ'այրէ ու կը ճենճերէ իր միտքը ու կը զսպանակէ իր երեւակայութիւնը միենոյն լարին թրթացումով կը ներկայանայ ինչպէս ամբողջ նարեկին նոյնպէս ամնկալ քաղցրութեամբ» մաղթանքին մէջ զոր քիչ յետոյ, պիտի յանձնեմ ճեր ու չափրութեան։

Եթէ Հաւատառվ խստովանիմուը Քրիստոնեայ հոգիի մը խաղաղ կեանքի պատկերն է, և եթէ «Փառք քեզ Տէր Աստուծ մերը քրիստոնեայ ազգի մը հոգերանութեան հաշելին, «Ընկալ քաղցրութեամբ» ը մեղքի սարսափին տակ գալարուող անհատին ճիշն է։ Հոգիի ու մարմնի՝ ներհակընդունեմ երկուութեանց տեսակ մը պայքար, որքան բնական նոյնքան անխռուափելի, որ կը տառապեցնէ մարզը և զոր նարեկացին կը պատկերացնէ այնքան հրաշալիօրէն։

Այդ մաղթանքը ունի երեք եղբեր։ Նախ Տէր Աստուծ հզօրը, որ հետիւն նախանձու, զբէժինզիր, պատուհա-

սող, որոտի, հուրի ու շանթի կայծակումներով ինքինքը յայտնող ենովան, տեսակ մը վախի ու սոսկումի Աստուած, ընկճուած ժողովուրդի մը հոգեբանութեան ծնունդ, այլ՝ ի հակառակէն, է այն ամենապարզե, ողորմած ու զթած, ծածկատես, վերնային ու փարատիչ ևայլն, անձնաւորեալ այն գերազոյն էակը որ, ունի մարդկային զորովին բոլոր կարելիութիւնները և որ կը ճանչնայ տիզմին մէջ թաւալող մեղաւորին բոլոր միտումները զոր կ'զգայ, կը տեսնէ ու զըթէ կը չօշափէ աղօթողը. ստորոգելիներ՝ որոնք քաղցրութիւնն ու ուժգնութիւնը կը պատկերացնեն մեղաւորին սպասող Աստուծոյն, ծնունդ հայ հոգիին՝ յլացքով մը հանգէտ իր ճակատագրին, որուն կրնայ ապաւինիլ մեղաւոր զստահ յոյսով փրկութեան մը ակընկալութեամբ՝ նոյնիսկ մեղքի անդունդներէն:

Յետոյ, սատանան՝ մեղքը՝ զոր կ'ուրակէ ան, խարող, մոլեալ, կորուսիչ, ըմբռոնոլ, մարտող, հաղք (սրոգայթ) և գն: Մեղքին՝ աւելի ճիշտ, դիւային իշխանին այս զլիսու պտոյտ պատճառող ածականներով պատկերացումը կը մարմաւորէ զայն, որ զիշերուան մթութեան մէջ արհաւիրքի սարսափ կը պտացնէ մեղաւորին սենեակէն ներս, անոր շուրջ ու դրանը ափ առած՝ այն պակուցիչ սեռութեամբը, որ երեցածէ ան մարդոց երեակայութեան մէջ, որ եղջրեներ ունի ու կրակէ երախ իր արբանեակներու խայտաբղէտ գունդովը:

Հուսկ՝ մարզը, մեղաւորը, որ երկու երեսներով կ'երեկի մեզ, նախ՝ մեղքի սարսափին մէջ հեացող եղկելիութիւնը, որ ամէն վայրկեան կ'սպասէ աստուածային օժանդակութեան զինքը պաշտպանելու իր տկարութեան ու գայթումներու մէջ և կը հայցէ «Պարփակելու առաստաղը իր տաճարին իր հզօր ձեռքովը. Իր արիւնովը գծագրելու սենեակին մուտքի սեմերը, իր խաչին նշանը զրոշմելու իր ելքի հետքերուն վրայ, մաքրելու և յարդարելու իր հանգիստի խաչին ու անկողնի ծածկաբանը, շրջափակ կեցնելու իր երկնային զօրքերուն գունդը» որպէսզի ազատ մնայ սաղբանքներէն սատանի. ու յետոյ, յաւիտենականութեան փառքը երգողի գերին մէջ՝ երգակից հրեշտակներուն, որ պիտի զգաստօրէն արթնայ զուարթագին հոգիով

խառնելու իր փառաբանութիւնները անոնց երգին վերառաքելու դէպի երկինք: Աւայսպէս, միշտ խորացող, վերլուծող ու նորոգուող բառերու եւ պատկերներու հեղեղով մը կը նկարագրուի այս վիճակը, ապշեցուցիչ առատութեամբ, յորգութեամբ ու ուժգնութեամբ, ինչպէս ամբողջ եարեկին՝ նոյնպէս այս մաղթանքին մէջ:

Մի՛ մոռնաք որ այս աղօթքը արտայայտութիւնն է ժրդ դարու հոգեբանութեան, ուր, սատանան ամենօրեայ ու ամենամեծ պարուրող իրականութիւնն էր:

Այսօր, սակայն, մեղքը չունի եղջիւրներու ոչ իսկ կրակէ երախ: Հագած է անայժմ ամենէն քննքոյլ ձեւեր եւ ամենէն հաճելի քաղցրութիւններ: Ան չի վախնար նոյնիսկ երբեմն առաքինութիւնը դիմակելէ երբ, ողորմութեան ձեւի տակ կ'որսայ մարզիկ իրենց հաւատքէն շահագործելով անոնց նեղութիւնը պատառ մը հացի զինով, զաւաճան ընելով զանոնքի իրենց դարաւորաբեան, աւանդութեան ու կրօնքին: Կը շրջի անայսօր, մեր մէջ ժպտուն, քաղցրախօս ու համոզիչ կերպարանքի մը ներքն և բոլոր կարելի գունաւոր շպարներով: Ասոր համար է որ այնքան դժուար է մեր օրերուն հաւատալ մեր անկումներուն: Թերեւս ձեւեր են մեր աղօթքները քան հզօր տագնապներ: Որքա՞ն երախտապարտ հնք մեր հայրապետներուն որոնք, եկեղեցւոյ հանդիսաւոր արարողութեանց կողքին տեղ տուածեն այսպիսի ճշմարիտ սարսափի, խոր վըրդովման պահերու երբ, կը հրափրեն մեզ այս մութ ու նուիրական կամարներու տակ ազգարելու մեզ թէ մեղքը մեր մէջն է նորէն: Ու սրտագինս կը փափաքէի որ, այս մոայլ երգերուն և տրտում պահէն, իւրաքանչիւրդ ձենէ իր սրտին ու հոգւոյն խորը ունենար Աստուծոյ այս վսեմ երկեղը և սատանի՝ այսինքն՝ մեղքին դէմ հագնէր պաշտպանութեան այս զօրտոր վահանը և ունենայիք ձեր շրժներուն վրայ մեծ ու միսթիք մեր աղօթողին սա բառերը. «Եւ սրտագիւլ վերսին ի ննջամնե ծանրութեան, ամենազգաս արքնութեամբ, հոգենորոգ զուարգութեամբ ի ենջ արձանացեալ զայս ձայն մալրանաց՝ բուրմամբ հաւատաց մարդիք, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաեկել: Զի գու փառաւորեալ ես յամենայն արարածոց յալիտեանս յալիտենից. ամեն»:

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՆԱԱՍԵՆՆՄԱԿԱՆ

ԼԵՐՆԷՆ ՎԱՐ

Ա. Ա. ՀԻ : Ա. Ա. ՀՈՅՈՒԹՅՈՒՆ

Յոզնած ու տըրտում,
Տըրտում՝ բայց արի,
Կ'ելէր Աքրահամ
Լեռնէն սրբազնն:
Վաթսուն տարիներ բապասած էր ան
Անշէջ հաւատորով
Խոստացուած մանկան.
Որ վերջալուսուղ իր ծերութեան դէմ
Բացուէր այգաշող:
Վաթսուն տարիներ անվարան նայած
Յամնցող յոյսին,
Օրիելով սիրան իր աստղերու երգով:
Ու հրաշքէն վերջ, Ողորմած Ռստուած,
Զայն լիուը հանել զոհելու համար:

Յոզնած ու տըրտում,
Տըրտում՝ բայց արի,
Կ'ելէր Աքրահամ
Լեռնէն սրբազնն:
Ու կը մըտածէր օրերուն ոսկի,
Երգերուն ուրախ, յոյզերուն կըրակ.
Բոլորը անցան,
Սրցունք ու մոխիր ծըգելով միայն:
Ու յիշեց մէկէն, ծընունդը մանկան,
Եւ ժըպիտն անոյշ Սառայի դէմքին
Բացած իր թիւէիր:
Առջեւէն անխօս կ'երթար Խսահակ:

Արեւածագին մեկնած էր տունէն,
Հեռու շատ հեռու
Լեռներէն անդին:
Կը նայէր նըկուն կարմիր արեւին,
Որ լիքան վըրայ կը պատարագուէր:
Բըլուններուն շուրջ, ու ծորերուն մէջ
Ոչինչ կը շարժէր:
Իր շըրթունքներուն աղօթքը՝ սառած:
Արեւն արիւնոտ Դագաղ մ'էր դըրուած
Լեռներու ուսին:
Իր քովէն անխօս կ'երթար Խսահակ....:
... Բարձունքին վըրայ հասեր են արդէն,
Զաւակին հետ լուռ.
Մահուան չափ արի,

Երկնքին չափ սէր,
Սքրահամ կեցած էր Աստուծոյ դէմ
Դաշոյնը ծեռին,
Խոնարհած զըլսուն վիրեւն իր տըղուն:
Երբ ծիծաղաձայն հազար ծընծաներ
Հնչեցին ուժգին,
Ու երկնքին տակ վրան իսկ վըրայ
Հստուերն անծանօթ,
Տեսիլք նըրեղէն,
Ափն իր երկարեց անոր դաշոյնին,
Ու կարկեց ուժգին:
Խսահակ անխօս կը դիմէր իր հայր....;

* * *

Քայրայուած , տըրտում ,
Կ'իջնէր Սքրահամ
Լեռնէն սըրբազն :
Հազիւ տըրովոլ իր հոգին մէջ
Կը փայլակէին հազար դաշոյններ :
Տարած էր իր սէրն երկնքի կանչին
Մերժուած չարաչար .
Խոյ մըն էր մորթած փոխան իր զաւկին :
Երկինքներու մէջ իր մեռնէր արեւ ,
Ու կը հընչէին լիռներուն վըրայ
Մահուան կոչնակներ :
Ոչ ոք պիտ կը քնար , նոյնիսկ Եհովան ,
Նորոգել , բուժել իր քեկուած հոգին ,
Նետուած երկնքի բարձունքներէն վար :

Ծերացած ու լուռ
Կ'իջնէր լիռնէն վար ,
Մահուան թեւերով հովը կը հեւար
Բըլուրէ բըլուր ,
Մարելով սըրտին լոյսիրը նըւաղ :
Սիրել մէ'կ սիրով ,
Բայց ըլկարենալ մեռնիլ անոր մէջ ,
Յօժարիլ մորթել զաւակն իր միակ ,
Սակայն մերժուիլ :
Ապրիլ տագնաապը , պարտուելու չափ
Իր մեծ երազէն ,
Բայց ըլկարենալ ա՞հ հասնիլ Անոր :
Լեռներու կըշտին կ'երկարին շուրեր ,
Սքրահամ տըրտում յաւերժ ծերացած ,
Կ'իջնէր լիռնէն վար .
Իր բովէն անխօս կ'երթար Խսահակ
Շուրբի մը պէս սեւ :
Երտսաղիմ

ԵԳԻՒՑԱՐԴ

ՊԵՏՄԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ Վ. ԿՈՒՆԾ

ԵՒ ԻՐ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճաշակ մը տալու համար ընթերցողներուս, թէ ինչ յօրինուածքով կազմած է Սարգիս իր Մեկնութիւնները. կը ներկայացնեմ հոս Ցովհաննու Մեկնութեան սկիզբը, համաձայն երուսաղէմի թ. 855 և 1250 ձեռագիրներու. Թովմաս Մեծոփեցւոյ վիայութիւնը, թէ Դուկասու Մեկնութեան արտագրութիւնը 1197ին ցյոյժ սխալ եղած է, կ'արժէ նաև այս երկու ձեռագիրներու համար. Ընդօրինակողները ոչ միայն անձիշ բառեր կ'օրինակեն, այլ և կը յապաւեն բառեր, նախադասութիւններ, երբեմն կը համարձակին նաև յաւելուածներ ներմուծել. Բնականաբար այսպիսի խմբագիր աշխատութեան մէջ, ուր իւրաքանչիւր պարբերութիւն խնամով ընտրուած հանուած է սուրբ Հօր մը գրուածքէ, բնագրին ամենափոքր փոփոխութեամբ իսկ կարող է խմաստի խաթարում յառաջանալ. Բարեբախտաբար երկու ձեռագիրներն ալ ունեցած են իրենց ուրոյն ուրոյն գաղափար օրինակներ. այնպէս որ հնարաւոր կ'ըլլայ երկուքի բաղդատութեամբ քիչ շատ վերականգնել սկզբնագրին ընթերցուածները, մանաւանդ երբ համեմատութեան առնուին աղբիւրները, որոնցմէ օգտուած է Մեկնիչը. Կոչումները արժէք, նաև իմաստ ունին, եթէ անոնց հեղինակը անուամբ մատշնանիշ եղած է. Սարգիս ջանք տարած է մէն մի կոչումի տէրը լուսանցքի վրայ համառօտագրով նշանակել. Օրինակողները սակայն հաւատարիմ չեն գտնուած նաեւ այս կէտի մէջ. անոնք չեն ունեցած բանակրի ճաշակ և ճշգապահութիւն. Յառաջըբերութեանս մէջ առանձին ջանք ի դորձդրի, վեր հանել մէն մի պարբերութեան աղբիւրը և ցոյց տալ հեղինակները, այնպէս ինչպէս Սարգիս մատնանշած էր իր սկզբնագրի օրինակին մէջ. Որչափ ալ իւմաստափօրէն քաղած հաւաքած է Սարգիս Ս. Հարց մտքերը, բայց և այնպէս

պէտք է ըսենք տժգոհելով, թէ տեղ տեղ չարաչար անդամահատած է պարբերութիւններ և խառն ի խուռն գասաւորած, երբ տուժած է անշուշտ նաև իմաստը:

Ի սկզբանի եր բան:

ԱԱՐԳԻՇՅ. «Իսկ» հայր. «զբան» որդի. աչ հոգին սուրբ:

ԵՓԲԵՄ. Զի յայտ արասցէ, թէ իրբեւ զբան ընդ ասողին իւրում է [յամենայն ի զործս որդին եւ ոչ արտաքոյ քան զնա է], եւ կցորդ է ծնողին իւրում [յամենայն ի փառս]. զի ի միտ առցես, զի մինչչեւ իցէ բան խաւսեալ է բանն. զի ահաւասիկ Զաքարիաս առանց շրթանց զպրութիւն խաւսեցաւ. զի որպէս բանիւ յայտնին ծածկեալք սրտի, այսպէս ծածկեալք նովայայտնեցան: Վկայէ Պաւղոս ասելով. խորհուրդք Աստուծոյ Հաւը Քրիստոս է, որ նովայայտնեցան ամենայն ծածկեալք իւմաստութեանցն եւ զիտութեանց Աստուծոյ:

ՆԱՆ. Զի որպէս բանն ոչ ինքն յինքենէն ունի զգոյանալն եւ ոչ յուշնչէ զլինելն, եւ ոչ արտաքոյ մտացն զծնունդն, նոյնպէս եւ ոչ որդին յինքենէ գոյացեալ կամ յոչէ յառաջ եկեալ. այլ որպէս բան առմիտսն կատարեալ ունի զծնունդն, նոյնպէս եւ որդի առ ի Հաւը (նաև. առ հայր) [գոյութենէ եւ ի յէութենէ եւ ի բնութենէ ծնեալ]: Տես որքան միով բանիւ ի ներքս ածելով փակեաց զանեղութիւն. զի որպէս ի ձեռն բանի զմիտոն ճանաչեմք, նոյնպէս և զհայր որդուով ճանաչեմք և զկամն նորա:

ՆԱՆ. Ի սկզբանէ էր բանն: Եւ զի՞նչ յայտ առնէ էրն, այլ զի ցուցցէ թէ յսկիզբն ժամանակին յորում Աստուծած առնէր զերկինս եւ զերկիր եւ որ ի նոսա արարածք իցեն, բանն էր, որպէս զի զանեղութիւն բանին էրն ցուցանէ (նաև. ցուցցէ) եւ զեր ի վերոյ եղականացս կացցէ բանն. զի մի գունակ Սրիսուականացն որ ի սկզբան լինելութեան արարածոց սկիզբն եւ արարած զորդի (նաև. զնա) իմանայցեմք:

ՍԵԲ. ՆԱՆ. Զի ոչ ասաց Մովսէս թէ ի սկզբանէ արար Աստուծած զբանն, այլ Աստուծած ի սկզբանէ արար զերկինս եւ զերկիր, որ պատմեն զփառս Աստուծոյ. մեք զմշտնջենաւորն ցուցանեմք:

ՆԱՆ. Վասն այնորիկ [ի սկզբանէ էր] բանն

աւետարանիչն յորջորջէ անձնուորութիւն նշանակէ եւ զեակցութիւն ընդ Հաւը. ոչ

Սեբեր. յառաջ քան զամենայն և զբան յաւիտեանս ծնաւ անծին զծնունդն իւր հանգունակ. զի յառաջ քան զյաւիտեանս է ծնողն, յառաջ քան զժամանակս է ծնունդն: Որով ամենայն ինչ եղեւ. եւ ժամանակք եւ յաւիտեանք: Մի յօրժամ լսիցես ծնունդ, մի մարմնական ինչ իրս կարծիցես, քանզի զանմարմնականէն է ճառս: < իւ մի քան զի > մեք ի հաւը և ի մաւրէ < չարչարանաւք > եւ միջնորդաւ եւ ժամանակաւ ծնանիմք, մի չարչարանս եւ մի միջնորդու եւ ժամանակս անժամանակին համարիցին. քանզի ինքն առանց իրիք պատճառառնաց բաւական է իւրում կատարեալ ծննդեանն, ոչ ժամանակաց թիւք և աւզնականութեան սպասաւորք: Ծնաւ Աստուած առանց չարչարանաց, առանց հատուածոյ. քանզի ոչ է հնար հատանել անհատական բնութեան եւ բաժանել անբաժանականին: Ապ' եթէ ամբարիչտ մտաւք ոք իմանայցէ և անկատար զկատարեալն առնիցէ, զի և ոչ հայր գտանի ամբողջ մնացեալ [եւ արարած ի վերայ բրերեալ լինի]: այլ է եւ եղիցի հայր ամբողջ կատարեալ եւ ծնունդ լի բովանդակ. քանզի կատարեալ Աստուածոյ է ծնունդ. քանզի եւ է իսկ ճշմարիտ. զի ոչ երկինք ճանաչեն զանպատում ծնունդն. քանզի չէին մաւրտ, եւ ոչ երկիրո՛ զի չէին հաստատեալ, եւ ոչ ծով զի չեւ եւս էին զատատեալ մեկնեալ:

Դիմո՞ն. Նովլաւ է գերազարդն. ի նմանէ է ներքնազարդն եւ չըջազարդն:

ՅՈՒ. Եւ իմաստութեամբ նորա տարածեալ է համատարածն:

ԵՐԵՄ. Զի նա եդ զարեզակն ի լոյս տուրնշեան, զլուսին եւ զատեղս ի լոյս զիշերոյ եւ ազաղակ ի ծովու եւ զոչեն ալիք նորա. Տէր ամենակալ անուն է նորա:

ՍԵԲԵՐ. Քանզի ամենայն ինչ Յիսուսի եկն ի լինելութիւն. ոչ ժամանակք, քանզի անժամանակ է. ոչ յաւիտեանք, քանզի յառաջ քան զյաւիտեանս է. ոչ հրեշտակք եւ ոչ հրեշտակապետք. ծնաւ Աստուած առանց կարեաց. ոչ խորհրդակից. մինն ծնաւ, մինն եւեթ զիտէ. ոիցէ որ ծնաւն, Աստուած. զինչ ոք իցէ ծնունդն. Աստուած: Որպէս որսորդն ասէ, որ ոչ զծովակաց կամ զզետոց պատմէ եւ ոչ զատ-

տեղս երկնից նշմարէ յառաջնորդութիւն սրաց: Ոչ ասաց որպէս Մովսէս, թէ ի սկզբանէ արտը Աստուած զերկինս և զերկիր. այլ անցեալ ընդ երկինս, ընդ ամենայն երկեւի եւ անմըթեոյթ արարածս, ընդ ժամանակս եւ ընդ յաւետեանս՝ ասէ, և սկզբանէ էր բանն:

ԵԲՐԵՄ. Այլ գուցէ բան գոյզն լսիցես եւ խոնարհեցուցանիցես զորդի առ այն իրքեւ զծայն ինչ ի ըրթանց բարրառեալ լեզուաւ եւ ըրթամբք Ընտրեալ, ընդ աւզ բախեալ, ապա կատարեալ ձայն արձակեալ. զի ձայն ոչ է ի սկզբանէ. քանզի յառաջ քան զատելն չէր նա, եւ յիտ ասելոյն գարձեալ չէ նա:

ՍԵԲԵՐ. Այսպիսի ինչ իմանալ զմարմնականաց է եւ ոչ զանմարմնոյն:

ԵԲՐԵՄ. Այն որ նա ինքն է նմանութիւն կերպարանաց հաւը իւրոյ, եւ ոչ է նա ձայն հաւը այլ պատկեր նորա. թէ որդին քո, որ ի քէն ծնեալ լինի, քեզ նման է, իսկ զիարդ արգեւք Աստուած ձայն ծնանէր եւ ոչ Աստուած: Զի թէ որդին եղիսարեթի որ ձայն կոչեցաւ, մարդ է, իսկ որդին որ կոչեցաւ բան, Աստուած է, եւ թէ ասիցես թէ բան կոչեցաւ որդի, գիտասչիր զի Յովհաննէս որ կոչեցաւն ձայն, անձն իսկ է. նոյնպէս եւ Աստուած որ կոչեցաւն բան, իսկ եւ իսկ Աստուած է:

Ցառաջերութիւններս տեղ տեղ անհամաձայն են հրատարակութեամբ ծանօթ բնագիրներու հետ. պատճառը շատ տեղ օրինակողներու անհմտութեան վերագրելու է անշուշտ. բայց կ'երեւայ թէ տեղ տեղ նաև խմբագրողը իր բաժինն ունի, այնու որ այդ փոփոխութիւնները կամ յաւելուածները կարծես նպատակ ունին բնագիրներու միտքը պարզել և անյարիր մէջբերութերը իրարու շաղկապել:

2. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊՈՎԿԱՍՈՒ ԱԼԵՏԱՐԱՆԻՒ

Աւնիմ աչքի առաջ երուսաղէմի թ. 149, օրինակուած ի Զմիւռնիա 1821ին Տէր Յովհաննէս քահանայի ձեռքով, և կը կրէ խորագիրս.

ԱՄԵԿՆՈՒԹԻՒՆ սուրբ Աւետարանին Ղուկասու. հաւաքեալ սրբոյն Սարգսի Հայոց վարդապետի և անյաղթ հռետորի, ի սրբոց աստուածաբան վարդապետացն մերոց Եփ-

բեմի, Ռոկեբերանի, Կիւրդի, Ստեփանոսի, Իգնատիոսի և այլոց վարդապետացն մեռոց, որ տեսանես յառաջիկայդ»:

Յովհաննէս քահանայ ձեռքի տակ ունեցած է օրինակ մը, որ ուղղակի կամ անուղղակի գաղափարուած է Թովմաս Մեծոփեցոյ և իր աշակերտաց ձեռքով։ Թովմայի Յիշատակարանը պահուած է ձեռագրիս մէջ, որմէ կարեոր կը համարիմ յառաջ բերել հետևեալն։ Թովմաս Մեծոփեցի կը զրէ ի Մեծոփայ գանս.

ԱԵւ պարտ է գիտել, թէ զիա՞րդ գտեալ եղաւ Մեկնութիւն Աւետարանիս։ Հարկեցին զմեզ եղբարքն զՄեկնիչն տէր Իգնատիոսի դաս ասել։ և մեք սկսաք ըստ տկարիմաց մտաց մերոց բան բան լուծանել։ Եւ տեսաք զի ոչ էր առեալ զբնագիրն ի ներս ըստ կարգի մեկնութեան բանի. մտաք և բանիւ տրտնջէաք որպէս սովորութիւն մնր։ Եւ ի նոյն աւուրսն եկն եհաս տօն ձննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եկեալ զնացաք ի գեող մի կոչեցեալ Ասպիսակն. մտաք յիկեղեցին և գտաք ի խորանին ձգեալ անպիտան ի մէջ մոխրակուտին. առեալ տեսաք և գոհացաք զԱստուծոյ, զի վասն առատատուր պարզեացն և ձրի չնորհացն զհասարակաց զշահն և զօգուտն ոչ արգիլէ ողորմած և մարդասէրն Աստուծած ի յանարժան վարդապետաց։ Եւ զասն դառն և չար ժամանակիս թշուառութեան ութ ամի մէջ անցաւ և ոչ կարացաք գրել։ Իսկ յորժամ բարերարն Աստուծած սակաւ ինչ անդորրութիւն ետ, ի ՊՀԶ (1427) թուականիս կամօքն Աստուծոյ սակաւ ինչ ես զրեցի և զբոլորն գրել ետու հոգեոր որդւոց իմոց Թովմայ զրագրի և Յովհաննէս զրոց աշակերտի։ . . . Յայց սկիզբն անկեալ էր մինչև «Յամսեանն վեցերորդի», զԵափերգան իգնատիոսին եգի։ Եւ զցանք խորան նոր եգի, զի դիւրագիւտ և առձեռն պատրաստ ուսումնասիրացն եղիցի։ Այս սխալանացն անմեղագիր լինել աղաչեմ. զի էր ինչ որ չնջեալ էր. և էր ինչ որ գրիչն սխալեալ էր. զի ՄԼ (230) ամաց էր։ Եւ յոյժ աշխատութեամբ ի յաւարտ ածաք։ . . .

Քրեցաւ աստուծային կտակս ի սուրբ Աստուծածանի, որ այժմ Մոծոփայ վանք անուանի, և գաւառս Քաջբերունեաց։ Եւ օրինակն առաջին գրեալ էր ի սուրբ ուխտն եղէվարդու ի դուռն սրբոյ եկեղեցւոյն

Թէոդորոսի, որ էր զրեալ յառաջին օրինակէն ձեռամբ աշակերտաց սուրբ վարդապետին Սարգսի՝ Դաւթի և Ներսէսի, յոյժ սխալ Քրիստոս Աստուծած ողորմի հոգաց նոցին ամէն¹¹։

Կը տեսնուի այս տողերէն, թէ ձեռագիրը, զոր գտած է Մեծոփեցի Ասպիսակն զիւղին մէջ, օրինակուած է «յառաջին օրինակէն ձեռամբ աշակերտաց սուրբ վարդապետին Սարգսի», որոնք են Դաւթի և Ներսէս, 1197ին յԵղիկարդ։ «Յայց սկիզբն անկեալ եր մինչեւ Յամսեանն վեցերորդի», կը զրէ Մեծոփեցի։ զԵափերգան իգնատիոսին եգի. և զցանք խորանացն նոր եգի», այսինքն ձեռագրէն բաժնուած ինկած են Սարգսի Ներածութիւնն և Մեկնութիւնը Դուկ. Ա. 1-5 համարներու. պական լրացուցած է Թովմաս Իգնատիոսի Մեկնութենէն փոխառնելով։ Զեռագրին վերջաւորութեան մասին խօսք չ'ըներ Թովմաս. բայց կ'երեայ թէ նաև այս մասէն թղթեր ինկած են. գոնէ Երուսաղէմի օրինակին մէջ կը պակսի Դուկ. ԻԴ. 48-51 համարներու մեկնութիւնը։ Եթէ ստուգիւ կը պակսէր ձեռագրին մէջ Մեկնութեան վերջաւորութիւնը, Թովմաս ո՞ւր կարգացած է Զեռագրին յիշատակարանը։ Յանկալի էր գիտնալ նաև թէ այդ ձեռագիրը միա՞յն Դուկասու Մեկնութիւնը կը բավանդակէր, թէ կար հոն նաև Յովհաննու Մեկնութիւնը։ Ինձ ծանօթ է թէ Թովմայի օրինակութեան մէջ Դուկասու Մեկնութեան կը յաջորդէր Յավհաննու Մեկնութիւնը։

Երուսաղէմի թ. 149 խորագրին մէջ կը գրէր. «զոր տեսանես յառաջիկայդ», այսինքն անունները այն աղբիւրներու, որոնցը օգտուած է Սարգսի, նշանակուած պիտի գտնենք բնագրին լուսանցքներու վրայ. Օրինակողը սակայն զանց ըրած է տալ զանոնք համառօտագիրներով։ Թովմայի օրինակը ունէր զանոնք. ինչպէս ունին նաև հատակոտընները, ի լուսանցս նշանակելով հատուածներու կից. եղ., Սոհ., Յոհ., Եփ., Կը., Կը., Բզ., Բզ., Գր. ևն.։

Պականները, զորոնք ցոյց կու տայ Երուսաղէմի թ. 149, կարելի է լրացնել այն հատուածներով, զորոնք հաւաքածոյ ձե-

¹¹) Յիշատակարան ծանօթ է չ. Ալիշանի «Այլարամ», էլ 199, ուր յառաջ կը բերէ վերջին տողերը.

ռազմիքներ յաճախ յառաջ կը բերին Սարգսի Դուկասու Մեկնութենէն, թէ և միշտ անառնուն: Հիմնուած այս հատակոտորներու վրայ կրնամ ներկայացնել Դուկասու Մեկնութեան սկիզբն ու կատարածը այսպէս. խորագիրը կու տամ ենթադրաբար.

«Մեկնութիւն Դուկասու Աւետարանին, արարեալ Սարգիս վարդապետի Կունդ կոչ չեցելոյ:

Պատճառ Աւետարանին Դուկասու: — Դուկասու Աւետարանու երրորդ է ըստ կարգի աւետարանչացն և հաւասար է գետոցն որ ի չորս բաժանի....

Մեկնութիւն: — Քանզի բաղումք յաւժարեցին վերսովին գրել: Որպէս ի հնումն զմարգարէութիւն յաւժարէին գրել, ոմանք ճշմարտապէս՝ որպէս Եսայիս և Երեմիաս, և ոմանք ստութեամբ՝ որպէս Անանիա որդի Ազարիայ . . .

Վերջ՝ Մատանէ ի ներքին կողմն վարդուրին ի սուրբն սրբոց, յանկոխն արարածական բնութեանս. ըստ այնմ թէ սուրբ Երրորդութիւն միայնակ շրջի ի սուրբն սրբոց և զամենայն արարածու արտաքոյ եթող առաջին և երկրորդ վարդուրին: Խոկ զառք առաքելոցն տուեալ զինքեանս մեծի ճըշնութեան՝ պահոց և աղօթից կային մային Հոգևոյն սրբոյ ըստ խոստմանն: Որոց և մեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած ճըշնուկից լինել նոցա և հոգւոյն հաղորդ. որում փառք և պատիւ յաւիտեանսո:

Զեռագիրք. Երուսաղէմ, թ. 149: Վենետիկ, Միխիթ. Մատ. յամէ 1197: Լալ. Ճեմ. յամէ 1427: Հատակոտորներ՝ Երուսաղէմ, թ. 1250, թղ. 269 ա-275 (ԺԳ. դար: Մեկ. Դուկ. Ի. 41-53 համարներու), 204թ-210թ (Դուկ. Բ. 21-41 համարներու):

3. Մեկնութիւն Եսայեալ

Սարգիս Վ. Կունա գրած է նաև Եսայեալ Մարգարէութեան Մեկնութիւն մը, որ մինչեւ այսօր երեան եկած չէ: Այս գրութեան մասին մեր ունեցած տեղեկութիւններն են.

ա. Երեմիա, աշակերտն Փէորդ Վ. Մկեռացւոյ կը գրէ անոր խմբագիր Եսայեալ Մեկնութեան Ընծայականին մէջ. և Եւ զի կը Սարգսի վարդապետի հոգացեալ (զՄեկ-

նութիւն Եսայեալ)՝ առեալ և զայն և զայլ բանսն սրբոց մեկնչացն՝ համառօտ զուգեաց (Փէորդ) առ իրեարս կարճաբանութեամբ եղեալ և զմտացն ամբողջ ունելով զգորութիւնը երուսաղէմ, թ. 365 (յամէ 1299). հմմտ. Սիսուան, էջ 103:

թ. Յովհաննէս Վ. Կունոտիկ 1415ին նոյն որէս ունեցած է այդ Մեկնութիւնը ձեռքի տակ, սրուն խմբագիրը կ'անուանէ և Սարգիս վարդապետի ի վանացն Խորանաշատոյ՝ կոչեցեալ Կունտօ:

չ. Գր. Զարպհաննելեան¹², հաւանօրէն Մկեռացւոյ տողերը աչքի առաջ ունենալով, յանձնին Սարգսի կը տեսնէ Սարգիս Վ., Ծնորհալին, երբ կը գրէ. «Սարգսի կ'ընծայուի և Եսայեալ մարգարէութեան մեկնութիւն մը՝ որ մեզի անծանօթ է»: Այսպէս կը գրէ նաև չ. Միքայէլ Զամչեան¹³.

«Սարգիս վարդապետ աշակերտակից իդենտիֆուսի . . . արար և զՄեկնութիւնն մարգարէութեան Եսայեալ. յորմէ բերէ վկայութիւն Գէորդ վարդապետ ։ Յովհաննէս Կունոտիկ գիտէ սակայն այդ Սարգսի մականունը Կունտօ, հետեւ արար տեղիք չկայ Սարգիս Ծնորհալոյ ընծայելու Մեկնութիւնու։

Սարգսի Կունա անշուշտ նաև այս Մեկնութիւնը յօրինած էր խմբագրելով սուրբ Հարց խօսքերով։

4. Մեկնութիւն Մարկոսի Աւետարանին

Պատահած եմ իջմիածնի ձեռագիրներու մէջ ընդարձակ հատուածի մը, որ առնուած է Մարկոսի Աւետարանին խմբագիր Մեկնութենէ մը, խմբագրուած ըստ ամենայնի նոյն ոճով, ինչպէս խմբագրուած են Սարգիս Կունտօ Յովհաննու և Դուկասու Մեկնութիւնները. աղբերները նշանակուած են լուսանցքի վրայ համառօտագիր. Ակ. Պը. Իգ. Կը. Ստ. Ալենեցի. Եփ. Ազ. Գը. Մու. Սով. Ով. Պզ. Սա. Պզ.։ Այս հատուածն է սկզբնաւորութեամբ և վերջաւորութեամբ.

զ. Ամէն առեմ ձեզ. են ոմանք որ առտկան: Ընդէ՞ր յառաջազոյն ասաց. զի կերթք լիցին այնպիսի տեսլեանն և թուով աւուրցն կարօտացին . . .

թ. Կամ ըստ այնմ որ առէ. Հայր փա-

12) Պատմութիւն Հայկական Հին Գրքութեան, էջ 628.

13) Պատմ. Հայոց, Վ. էջ 57.

ուաւորես զորդի քու Հրեայք վասն Զօրաբարէլի առնեն զայս. այնչափ հեռի էին ի նմանէն :

Հեղինակը անձանօթ կ'իրեւայ Բարսեղ Մաշկեւորցիի Մարգոսի Մեկնութեան, ուրուն թ. հատորն միայն հասած է մեզի, կը զրէ Հ. Դ. Ալիշան, Արտուան 516. թէ դասած է տեղ մը լիշուած, թէ Վրիզոր Աշնաւրդէցի հեղինակած ըլլայ և Մեկնութիւն Մարկոսի աւետարանէնու : Ինձ անձանօթ է բացի Մաշկեւորցիէն, ուրիշ հեղինակ, որ զրալած ըլլայ Մարգոսի Մեկնութեամբ : Բայց Մարգոս կունտ, որ տուած է Պուկառու և Յովհաննու խմբապիր Մեկնութիւնները, կարող էր իր կարգին նաեւ Մատթէոսի և Մարգոսի աւետարաններու մեկնութիւնները զրած ըլլալ :

5. Մեկնութիւն Գործոց Առաքելոց

Այսպիսի զրուածք մը ձեռքի տակ ունեցած է յանուն Սարգիս վարդապետի Մատթէոս Վ. Տաթեւացի, որ 1411ին գրոծ է Գործոց Մեկնութիւն մը. կը զրէ. «Տատաննեալ կենօք ձեռնարկեցի հաւաքիլ զրանս սուրբ հօրն մերոյ Ասկերերանի և Եփրէմի և զոր ինչ պարգևեաց մեզ Հոգին սուրբ» . և զարձեալ. «այլ և երջանիկ հօր մերոյ Սարգիս վարդապետի յիշատակ ի սմա եղիցի, զի պատճառ եղեւ մերոցոց գծագրութեան. քանզի նա կանխառ համաստօնեալ եր զսա (այս ինքն զրանս Ասկերերանի և Եփրէմի). և մեք նորին շաւզացն հետեւցաք» :

Գործք Առաքելոցի խմբագիր Մեկնութիւն տուած է մեզի Գէորգ Վ. Ակեւուացի: Յանուն Սարգիս վարդապետի նման աշխատութիւն մը ծանօթ չէ յայսօր. եթէ յօրինուած է երբեք, իբրև հեղինակ ամէնէն յառաջ Սարգիս կունտ պէտք է նկատի առնուրի:

6. Լուծմունք Աղօրից Գրիգորի Նարեկացւոյ

Հ. Մէք. Զամշեան¹⁴ խօսելով Սարգիս Վ. Շնորհաւոյ մասին կը զրէ. «Արար սարնդարձակ բանիւք եւ յստակ ոճիւ նաեւ Մեկնութիւն Աղօթից Նարեկացւոյն, որ-

պէս աւանդի ի յիշատակարանս ինչ, զոր այժմ չունիմք ի ձեռինս :

Յիշուած Մեկնութեան հանգիպած եւ երուսաղէմի թ. 1324 ձեռագրին մէջ: Կը վարանիմ ընծայելու զայն թէ Մարգիս Շնորհաւոյ եւ թէ Մարգիս Կունտի: Բայց տեղս յարմար կը համարիմ ներկայացնել բանատէրներուն զրուածքիս սկիզբն և վերջաւորութիւնը, յիշատակարանին հետ:

7. Լուծմունք հոգելիցն բանից սրբոյն Գրիգորի

Զայն հառաջանաց: (ԼԾ.) Զայնն յերկուս բաժանի. ի յօդեալն եւ յանյօդն....: Վերջ ի քառից աչաց: (ԼԾ.) Աչք մարմանց իմս և իմ եղրօնն չորս էին. բայց տեսութիւն խորհրդոյն և շաւիկն մի: Ի վասս Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Փառք . . . Աստանօր իրաւապէս զկայ առացէ ի կատարումն և ի զլխաւարտման այսմ աստուածապատում մատեանս, որ կոչի Նարեկ. զոր արարեալ է միծ վարդապետն Հայոց Գրիգոր Նարեկացին. և զլուծումն սորին զոր արար յիտոյ վոհմամիտն և ճարտարաբանն Սարգիս վարդապետն ի յառաջին ձայնէն մինչեւ յաւարտ չնչոյն. լիակատար զլուծումն արել է:

Այժմ աղերսեմ և խնդրեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մերոց հոգեսորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ գուլէ ձերդ մաղթանաց ցաւզեսցէ վասն կենաց հարազատին իմ եղրօր Յովհաննէս կոչեցելոյ. և ինձ տառապետալ ոգոյս Միմէնիս¹⁵. և լուասցէ զբազմաշարաւ ոսկերս մեզօք մեռելոյս. զի մեք երկոքեանս եմք զրի զգիրքս. սակաւ մի ի նարեկացոյն և զլուծումն ես զրեցի: եւ զգիւրալիր ընթեռնելոյն զձեռնազիլին նա զրեց: Որք իրերէ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան չինել զիմաց կենցաղակցելով. ոչ միայն հարազատք, այլ և միաշունչ համապատիւք զուգահաւանք, ի չորից աչաց առ մի և նոյն շաւիկ խորհրդոյ տաեւլք: Եւ մաղթեմ եղբայրական սիրով ի ճաշակողաց յայսմ սեղանոյ յօքնօրէն և ախոր-

15) Թղ. ՑԱՐ Կայ նոեւ յիշատակագրութիւնս ուրիշ ձեռքէ. «Ձերասին ստացաւզ առը զբաց Գրիգորի նարեկացւոյ զմիւնեն արեցաց զիլիսիացն այժմուս և զվարուեն ձայնուրց և տեղորի (շարունակութիւնը Բյունակ):

14) Պատմ. Հայոց, Գ. էջ 57.

ժահամ, հանգերձեցելոյ յիշատակել ի մազաթանս ուղիղու զծնօղսն մեր և զեղբարքն մեր որ հոմանուն է ատենահաս զօրավաշը րին [Սարգիս]: Եւ զարձեալ կրկին անդամ ազաշեմ զի յիշման արժանի առնէք զՅովահաննէս կրօնաւորն զմականունն մի մոռանայք, զի սա ծնօղ է մեզ հոգեոր և նախախնամող մեր տկարութեանս. որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսացելոցս առ հասարակ ողորմեսցի բարերար և բազումողորմն Աստուած, Յիսուս Քրիստոս. ամէն:

Երջապատեալ զմեզ ըրչագայութեամբ տումարի հայկազեան սեռից. հարիւրից կրկնակի քառից և միոյ թուոյ և ժ. անց վեցից [ՊԿԱ. = 1412]. յորում ամի թագաւորեալ էտ զդանութիւնն ձալալատին սուլտանն, որպի Թօղթամիշին, և տիրեաց աշխարհիս մերում որ կոչի Առորիսաթ: Գրեցաւ սայ ի յայսմ նահանգիս, ի հրեշտակարնակ վանօրեայս առ դուրս սուրբ Լուսաւորչիս, որ է հուպ սուրբ Յովհանէսին, որ կոչի Օթուզ: Նաև զպատուելի ծերունին զՏաւնական վարպետն և զհեզառի եղարայն մեր զԹադէսս կրօնաւորն և զՄարդիսն յիշեցէք:

Զեռագիր՝ Երուսաղէմ, թ. 1324, թղ. 312ա-359ա:

Ուրիշ ձեռագիրներու մէջ Հուծմունքս կը վերագրուի Ներսէս Լամբրոնացւոյ. կան ձեռագիրներ ալ, որոնք չունին հեղինակի անուն:

Կ'աւարտեմ այս տեղ աշխատութիւնս, յուսով թէ ժամանակը պիտի տայ մեզի անդրագոյն տեղեկութիւններ Սարգիս Կունտի կեանքէն եւ Երեւան պիտի հանէ նոր գրուած քնէր ալ անոր արդիւնաւոր գրչէն:

Երուսաղէմ

Հ. Ն. Ակինենն



ԵԶՈՒՄԳԻՑԱԿԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Նոր կազմուած լեզուներու շարքին պէտք է դասել աշխարհաբարը, առանց մերժելու անոր հետաւոր ազերսը՝ կի՞ ատեններ գոյութիւն ունեցող աշխարհիկ կարգ մը բարբառներու հետ, որոնցմէ հետքեր ալ կը պահուեին տակաւին մեր մատենազրութեան մէջ: Նոր է անիկա իր ձեերու ընդհանուր յօրինուածքին՝ և կարճ ժամանակի մէջ ունեցած կազմութեան տեսակէտով, որուն դար մը անգամ պէտք չեղաւ ինքնինք ձերբազատելու գրաբարի խնամութենէն, և իրրե նոր լեզու զրական տարալ մը հագնելու: Գրաբար և աշխարհաբար բառարնին գրեթէ նոյնութիւնը պատճառ մը չէ անշուշտ որ քերականական ու համաձայնական հանգիտութիւն մըն ալ հետեւցնելու խարկանքէն տարուեինք, քանի որ լեզուի մը ընդհանուր նկարագիրը կազմելու համար ոչ այնքան բառարանին կ'ապաւինինք, որ քան անոր քերականական կազմութեան:

Այդ իմաստով՝ նոր կազմուած լեզու մը, տարակայս չկայ թէ, բարեփոխումներու և ընդհանուր կարգաւորման պահանջներ շատ աւելի կը ներկայացնէ, գէթ իր վերջնական ձեռ ստանալու համար, և իր քերականութիւնը ձերբազատելու կամայական ու մասնաւորներու յատուկ նախընտրութիւն ունեցող ձեերէ, մեաց որ նոյն այդ պահանջքէն զերծ չեն արդէն իսկ իրենց ընդհանուր կազմապարումը ստացած ուրիշ լեզուներ, որոնք աշխարհաբարէն կի՞ թուական մը կ'արձանագրեն իրենց սկզբնաւորութեան:

Այս պահանջին ծնունդն են անշուշտ հայրենի երկրէն դուրս՝ ցարդ կատարուած ու առաջարկուած ուղղազրական ու քերականական այն ցուցումները, և հուսկ ուրեմն հայրենի հողին վրայ յառաջ եկած այն մեծ շարժումը, որ «Երեւանեան ուղղազրութիւն» անունին տակ կը ներկայանայ մեզի:

Ոտորն պիտի խօսինք այս վերջին ելութի մասին, իսկ հոյ կ'արժէ վեր առնել հայշկաբաններու այն տեսութիւնները, որոնց մով աշխարհաբարը կը կոկուե, կը իսկոնաւորուե, ու կը ներգումնակուե:

Կ'ընդզենք այդ բառերը, ժամանակի հետարութենէ մը անսց խկական արձեւքը քննելու համար, քանի որ, գժրախտաբար, ակնարկուած հայկաբաններէն բոլորին չենք կրնար ընծայել նոյն պատիւը՝ յառաջադրուած նպատակի իրագործման ահսակէտով։ Այսուհանդերձ անուբանալի է այն արժանիքը, որ բալորինն է, այսինքն լեզուին բարեփոխման և կաղմաւորման պահանջմբն զգացումը, և այդ ուղղութեամբ կատարուած անկեզծ ճիգերը, որոնք որքան ալ չեղած ըլլան երբեմն նպատակէն, ցոյց կուտան այդ նպատակին համար եղած աշխատանքը, որ անհրաժեշտ պէտք մը գոհացում տրուելու դրդապատճառէն յառաջ կուգայ, և որ իր երեան բերած որեւէ ձեի արդիւնքով՝ գնահատելի է ինքն իր մէջ, այդ շարժումը հրահրելու և ժամանակի յառաջիմասէր ողին բացաբերու համար։

Աշխարհաբարի արագ կերպաւորման ձիգը պէտք է բացաբեկ առաւելապէս այն հակամարտութեամբ, որ տեղի ունեցաւ դրաբարեան ու աշխարհաբարեան այն խըմբակին միջև, որոնցմէ իւրաքանչիւրը ի պաշտպանութիւն իր թէզին՝ ջանք չխնայեց ի՛րը պարտագրելու և իրենին օգուաներն ու առաւելութիւնները երեւան հանելու նախանձայութութեամբ։ Աշխարհաբարեան խմբակը, գրական աւանդութեան կուտանէ մը զուրկ՝ մէկ կողմէն, և իր պաշտպանած աշխարհաբար լեզուին անկերպարան ու աղքատ իրողութեան յանդիմանուած՝ միւս կողմէն, առաջին առիթով ուղեց զրական ապահովութեան մը կոռւանը ընծայել իր համոզումին պարտագրելու համար շատերը, ու, միուսինեան՝ այս շարժումին ջատագովներէն մին, կարգ մը բարեկամներու օժանդակութեամբ ու նախաճեռնութեամբ հրատարակեց իր «Ուղղախօսութիւն հայ լեզուի» (1853) անուամբ քերականութիւնը, լստ կանոնի պատրաստուած լեզուի մը ջատագովութեան փութկոտութեամբ, Դրեթէ տասնամեակ մը յետոյ (1864) այդ գործին յաջորդեց Քիրէճճեանի «Հայերէն

քերականութիւն աշխարհաբար լեզուին ձեռնարկը։ Այս երկու քերականութիւններուն արդէն իսկ տկար պատրաստութիւնը ստուերի մը ըրջանակին մէջ թողուց երկու տարի ետք չ. Ա. Այտընեանի հրատարակած գնական քերականութիւն աշխարհաբար լեզուին ընդարձակ գործը, որ մանրացնին ուսումնակրութեամբ մը կը վերլուծէր աշխարհաբարի ծագւմն ու զիմայիկութեանը լեզուական զիտութեան սկզբունքներու հիման վրայ, և աշխարհաբարի յազգաշնակին վճռական կոթողը կը հանդիսանար։

Գոյութեան ու կիրառութեան ընդհանուր իրաւունք մը ձեռք բերելէ ետք աշխարհաբարը՝ կը կարուել տակաւին վերհպատճին մէջ ընդհանուր յարաբերութեան մը մէջ մնաց գրաբարին հետ, ու հարկատու անոր՝ քերականական կարգ մը ձեռիրով, որոնցմէ զիմաւորը եղաւ իր բարգութեան օրէնքներուն նոյնութիւննը զրաբարին հետ Այս երջանիկ պարագան պատճառ պիտի զանայ օր մը, ինչպէս կը կարծինք, յառաջ զաւիք նոր հերձուածի մը, որուն հետքերէն հեռու չենք այսօր իսկ, երբ զիտական հիմքով այլևս սխալ բարգութեան այդ օրէնքները, գէթ աշխարհաբարի համար, պիտի ստեղծեն վաղուան աշխարհաբարին որդեգրելիք նոր օրէնքներուն հանգէպ։

Բացի զրաբարէն, աշխարհաբարը հիմնուեցաւ երկրորդ ամուր կոռւանի մը վրայ՝ որ էր ժողովուրդին բենին մէջ արդէն իսկ գործածութիւն ունեցող լեզուն, որ առաւելագոյն չափով իւրաւունք կուտար անոր զրական լեզու զանալու յաւակնութիւններովը սնանող պաշտպաններուն։ Լեզուական-գիտական այս ուղղութիւննը կարելի չէ հեռացնել նկատողութենէ՝ մօտենալու համար լեզուի մը բարեկարգութեան հարցին, երբ ժանաւանդ ընդհանուր փոփոխութիւններու օղակաւորում մըն է կատարուել մեքը, չի կրնար պարապութեան մէջ կախուած և քմայքներու սանձարձակ ազատութեամբ մը թե առած սկզբունքներու վրայ

հիմունիկ՝ արգիւնաւոր վերջաւորութեան մը յանդելու համար և Անձանօթ մնաց այս իրողութիւնը Զերազի, որ դպրոցական նըստարաններէն հազիւ ձերրազատուած, իր պատանեկան խանգալառութեամբ ու բարբանաւորութեամբ, մուտ գործեց աշխարհարարի սեմէն ներս, և նշգրակ ի ձեռին կրաքեց ու կրծատեց բառերը, իր ականջի նաշակին ապաւինած միայն, և չվարանեցաւ մինչև իսկ իր «Դրական փորձեր»ը հրատարակի իր շինած հայերէնով ու իր միօրինակ հոլովումներու կանոններով, որոնք հակառակ իրենց միօրինակ վերջաւորութեանցը ընդհանուր ձեւերուն, կը չեղէին ու գրարաբին կը գիմէին գերանուներու հոլովման պարագային: Դրական այդ փորձերը, հակառակ իրենց գրական արժանիքին, համախօններ չունեցան լեզուական մասին համար, ու Զերազ սթափեցաւ ինք ալ լեզուական մեծ յեղաշրջութեան մը երազէն, իր յաջորդ գրութիւններուն մէջ հետեւելով կիրարկուած ընդհանուր օրէնքներուն: Զախողիցաւ փորձը, բայց մնաց լեզուին բարեկարգութեան պէտքը, աւելի շեշտուած, ինչ որ հետպհետէ մօտեցաւ իր կատարելութեան՝ մամուլով ու զանազան փոքրիկ ձեռնարկներով: Կը մնային լեզուական փոքրիկ սխալներ, քերականական և բայական ձեւերու զանազանութիւններ: Այս մասին թերթերու և հանդէօններու մէջ կան փոքրիկ յօդուածներ, իսկ գիրքի ձեռով Յ. Թիրեաքեան հրատարակից «Հայերէնի զեղծումներ» անունը գործը, մասնակի սխալներու դարմանումին համար, և նոյն ուղղութեամբ՝ Հ. Ա. Ղազիկեան ունեցաւ իր «Մի գրեք... այլ զրեցէք»ը, ուր մեծաւ մասամբ վերատին յիշուած են Թիրեաքեանի մատնանից ըրած սխալները: Այս բոլոր ձեւերը չկարողացան սակայն ստեղծել լեզուական ու քերականական ընդհանուր ձեմը, վերջնական կնիքը տալու համար աշխարհաբարին, ու տակաւին կը շարունակուին ալլազան կարգ մը ձեւեր՝ ոմանք արգիսութեան արգիւնք, իսկ ուրիշներ սխալ համոզումներու իրեւ հետևանք:

Միթիթարեան կրկին դպրոցները ունեցան ուղղագրութեան ընդհանուր ուղղութիւն մը, զոր անթերի կը կիրարկին ցարդ, եթէ նկատի չառնենք Հ. Վ. Հացունիի վերջերս ունեցած կարգ մը լեզուական հեր-

ձուածները, զորս իր վերջին գործերուն մէջ ալ անցուց, և «Բազմավիճակ» զարմանալիօրէն, նոյնութեամբ հրատարակեց հեղինակին այդ լեզուով յօդուածները, հեռանալով ցարգ ընդունուած ընդհանուր սկզբունքէն:

Միթիթարեանց նոյնաձեւ ուղղագրութեան մը գովիստը ընելու առթիւ պէտք չէ մոռնալ նոյն ատեն այն կարգ մը սխալները, որոնք գրաբարով հազիւթէ արդարանալի՝ յայտնի սխալներ են աշխարհաբարի համար, օրինակ կը զգամ, կը օսապեմի նման ձևեր, որոնք յամառօրէն պաշտպանուեցան և հետևաղներ ալ ունեցան միթիթարեաններէն գուրս գտնուող ըջանակներու մէջ, խիթեալով պարզապէս Հ. Ա. Ղազիկեանի բարձրագաղակ կանչերէն, որ ոստիկանական հսկողութեան մը պաշտօնն էր ստանձնած ինքնաբերաբար, և կը խարէր ու կը խարանէր լեզուին ներքին հմունքներուն անտեղեակ կարգ մը հրապարակուիրներ, որոնցմէ շատեր չկրցան ցոյց տալ պաշտպանուած այդ սխալներուն անհեթիթութիւնը: Նոյն մոլեսանդութեամբ յամացեցան Միթիթարեանք՝ տառաղաբօւթեան հարցին մէջ, առանց իսկ թափանցելու բարին իմաստին, և գրեցին ու կը գրեն տակաւին ալլանդակ ձեռով անուններ՝ Հիմկնիթ, ՊՈՍՈՒԻԵՏ, ՀՌԱԿԻԿԻՆՈՍ, ՄԵՅԵԼՅ, որոնք զբարար չէին, իսկ աշխարհաբարերեք՝ Ժիտական մասնիկներու գործածութեան մէջ ալ դատապարտելի սխալներ ըրին՝ չի զբալիրի նման բարբարոս ձևերու զիմենով: Ու իրենցմէ ոմանց մերժած ինչպինների նման խոտելի սխալներ տեսնուեցան նոյն այդ հեղինակներուն գրուածքներուն մէջ նոյնիսկ Միթիթարեանք, որոնց շատ բան կը պարտին ցիրաւամբ ու կ'սպասենք տակաւին, գժբախտաբար իրենց զբարարեան պատուանդանին վրայ ամրացած, չկրցան նայիլ աշխարհաբարին գիտական իրատեսութեամբ, ու իրենց այդ մուլեանդութեան զոհեցին աշխարհաբարի շատ մը իրաւունքները, չկարենալով չափել վաղուած հայերէնին իրաւացի պահանջները: այսպէս սանհար ըլլալով ստեղծութելիք միաւուակ ուղղութեան:

Վաղուած Հայերէնը, — Բարգութիւն, տառադարձութիւն և երեանեան ուղղագրութիւն: Ահա երեք գլխաւոր հարցերը,

որոնք նիւթը սիտի կազմեն վաղուան հայերէնին, վերջնական կնիքը տալու համար աշխարհաբարին: Յիշեցինք վերև աշխարհաբարի բարգութեան օրէնքներուն նոյնութեամբ գրաբարէն գալը: Այդ գրաբարը մեռեալ լեզուներուն շարքին ըլլալով այսօր, չե կրնար լեզուական փոփոխութիւններու ենթարկութիւն այլքս: Ի՞նչ պիտի ըլլան սակայն այս երկու լեզուներու հասարակաց եղող օրէնքները, երբ նկատի ունենանք աշխարհաբարի պահանջած շարունակական բարգաւաճութերը: Պարզ է որ աշխարհաբարը չի կրնար այլքս մեռեալ լեզուի մը կանոններով պատուաստութիւն, հետեաբար յառաջ պիտի գայ այդ մասին ևս հերձուած մը, որուն սիրով պիտի յօժարի աշխարհաբարը՝ իր ունենալիք յառաջդիմութեան եւ լեզուն ըստ կարելոյն գիտական հիմունքներէ չհեռացնելու սկզբունքի մը ոլորոյն համար: Կ'արգաբարանաց այդ հերձուած բայց նախ պէտք է քննել գրաբարի բարգութեան օրէնքներուն գիտական հիմունքներէ չհեռացնելու սկզբունքի մը ոլորոյն համար: Կ'արգաբարանաց այդ հերձուած բայց նախ պէտք է քննել գրաբարի բարգութեան օրէնքներուն գիտական հիմունքներէ չհեռացնելու սկզբունքի մը ոլորոյն համար: Սարակոյս չկայ թէ վաղուան հայերէնին համար հարկը պիտի լուծէ օրէնքը, և վաղուան հայերէնին համար խորթ ու մերժելի ձեւեր պիտի ըլլան բարգութեանց, ածանցմանց և մասամբ հոլովմանց գրաբարեան ձեւերը, որոնք գոյութեան ըստեւաբար հնագոյն այդ աղբիւրը թերի ապաւէն մըն է մեր նպատակին ծառայելու համար: Տարբեր երեսներէ զիտելով հարցը, կը տեսնենք թէ բարգութեան ընդհանուր սկզբունքը հիմուած է ծայնաւորներու երկարութեան ու սղութեան եւ շեշտի գործածութեան կամ տեղափոխութեան վրայ: Պարագաներ՝ որոնք խակական պատճառն են յունարէնի հոլովումներուն ու բարգութիւններուն, ու այդ օրէնքն է որ արձագանք գտած է մեր մէջ թրակացիի քերականութեան միջոցաւ: Արդ, յոյնը վաղուց կորսնցուցած է իր ծայնաւորներուն միջև ամանակի տեսղութեան դրութիւնը, որ քերականութեան մէջ կայ սակայն ամբողջութեամբ: Հարց է հիմա թէ ունէին հայերն ալ ի հնումն երկար ու սուզ ծայնաւորներ, որոնց մասին որոշ ակնարկութիւններ ալ կան մեր մատենագիրներուն մօտ, թէ ոչ թրակացիէն սորվելով կ'աւանդէն մեղի ծայնաւորներու այդ զանազանութիւնը: Հարցին լուսաբանութեան համար հետեւինք պահ մը մեր կին հոլոված նիւթը նիւթին մեր մէջ միջոցաւ: Արդ, յոյնը վաղուց կորսնցուցած է իր ծայնաւորներուն միջև ամանակի տեսղութեամբ: Սարբեր են անոնք այսով և ամանակի տեսղութեամբ: Այս խարկանքը հիմ ալ ծառայեց օր մը՝ ուրիշ սխալի մը արդարացման իրեր փաստ: Տես շայ լեզուի ուղղագրութեան դասերը, իջ 72:

վումներու և բարգութեանց կիրարկած ձեւերուն՝ բառերու շեշտին նկատմամբ: Ի՞նչ է պատճառը որ նեն բառէն շինուած է ի՞ն նախնդիր և ոչ նենախնդիր: Ներսէսը եղած է Ներսիսի կամ Ներսէսի: Արդիւնք չէ ասոնք ձայնաւորներու երկարութեան ու սղութեան և շեշտի փոփոխման: Դարձեալ մանուկ կ'ըլլայ մանկան, մանկական, ահ. ուր ու երկարբառու կը կորսուի, երբ իր վրայէն կը հեռանայ շեշտը և կարելի չըլլար իր երկամանակ արժէքով արտաբրերէ բնութեամբ իսկ երկար այդ երկարբառու: Ու այս սկզբունքով կ'ընթանայ յունարէն բարգութեանց ու հոլովմանց գրութիւնը, բացի մերինէն ունեցած շեշտի գործածութեան զանազանութենէն: Ի՞նչ պիտի ըլլայ աշխարհաբարի զիրքը այդ օրէնքներուն հանգէպ, որոնք մեծ մասամբ գոյութիւն չունին այսօր մեզի համար, և յանիրաւի կը կաշկանցեն լեզուին ազատ զարգացումը գիտական-լեզուական սկզբունքներու հետեւողութեամբ: Տարակոյս չկայ թէ վաղուան հայերէնին համար հարկը պիտի լուծէ օրէնքը, և վաղուան հայերէնին համար խորթ ու մերժելի ձեւեր պիտի ըլլան բարգութեանց, ածանցմանց և մասամբ հոլովմանց գրաբարեան ձեւերը, որոնք գոյութեան իրաւունքէ գրկուած պիտի համարուին ձայնաւորներու երկարութեան ու սղութեան սկզբունքին կորուստին պատճառաւ նոյնիսկ. թերես պիտի պահուեին միայն կորուսման կարգ մը ձեւեր, սղմ ու ճաշակաւոր գեղեցկութիւն մը տալու համար լեզուին: Զնչին՝ բայց հիմնաւոր ապացոյց մըն է արդէն երկինք՝ երկինքի, զիրք՝ զիրքի ձեին շատերու կողմէ արդէն իսկ կիրարկումը, ուր երեւութապէս երկար սեռականի այդ ձեւ աւելի ճաշակաւոր և սուզ է թանձը և գտնիւմբեր լին (գ(ը)քի) ներկայութենէն մերկացուած վիճակին մէջ (*): Աշխարհաբարի զարգացման հետ ուրեմն պիտի լայնայ խրամատը զարարին, որ պիտի շբաւէ այլքս իր օրէնքներէն բաժին

(*) Պէտք չէ շփոթիլ՝ մեր լին եւ եւրոպական և (և)ին միջև ծայնի նմանութիւն մը հնաթարելով: Տարբեր են անոնք այսով և ամանակի տեսղութեամբ: Այս խարկանքը հիմ ալ ծառայեց օր մը՝ ուրիշ սխալի մը արդարացման իրեր փաստ: Տես շայ լեզուի ուղղագրութեան դասերը, իջ 72:

հանելու աշխարհաբարին, որ ի՞ր օրէնքները
պիտի ունենայ հինին փոխարէն, լայնապոյն
և զիտական գետնի մը վրայ կարենալ զար-
դանալու համար, ինչ որ պիտի նպաստէ
լեզուին ներդաշնակ զեղեցկութեան և ու-
նենալիք ճոխութեան։ Այս մասին գրաբա-
րէն խոշոր նպաստ մը առնելու թէզը, որը
սմանք առաջարկեցին, կարգ մը ոճերու և
հասդիրներու գործածութեան համար, ան-
կառած ունի իր մեծ առաւելութիւնը լու-
զուն ճոխացնելու և իմաստի նրբութիւն-
ներ յառաջ բերելու տեսակէտէն, պարա-
գայ մըն է սակայն որուն իրագործութիւն-ը
ներկայ պայմաններու մէջ կրնայ դժուա-
րութիւններու բախիլ և անպատճ թողուէ
կատարուած աշխատանքը, ուստի զանց
կընենք խօսիլ այդ մասին։

Նիկոսիա
1939

Պ. Գ. ՄԻԿԱԱԼԵԱՆ

(ՀԵՇՉ Հ-Հ-Շ-Շ-)

ՀԱԽՏՔԻ ԵՒ ՄՏԱՄՄԱՆ ՑՈՒՔԵՐ

Բաւական չէ միայն ցանկալ եղանակու-
թան, ու խորհիլ ըկ բաժին մըն է ան, որ
որ մը, պիտի տրուի մեզի դիպուածաւ, կամ
իբր ի զին կարծուած կամ յուսցուած ար-
ժանաւորութիւններու։

Ոչ մեկ բարիք կրնայ սացուիլ անու-
խաս։

Ու լրագոյն առաւելութիւններն են ա-
նոնք, զորս ոչ ըկ կ'ընդունինք, այլ որոնց
կը տիրանակ յանցուն, երկար՝ լուրջ՝ խոր-
հզանդուած եւ ասծանելի նիզերու փոխարէն։

Երկ առօհեայ փորձառութիւնը կը վկայէ
ըկ նիշը է այս մածումը կենցաղական լա-
ւաւրեանց տեսակէտով, խղճի զգուցումը եւ
բարոյական օրէնքներու խելամտութիւնը պէտք
է բան զաղափարի մարզուն ըկ ո՛ւրիս ա-
ւելի հօմարիս է ան, երբ ներին կեանին ն
մասին է հարցը։

Հզուով ծոյլը, երկմիտք, երկչոր, ընդու-
նայն վերապահութիւններով ինքինքը ան-
գործութեան մատնող սիրտը չի կրնար հաս-
նիլ այն բարութեան, որ երիստնեական սի-
րոյ ոգեւորութիւնն է երկրի վրայ։

«ԱՐԵՏԱՐԱՆԻ ՑԱՄՐԵՆ»

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՐ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԷՊԻ

Տեսած եմ Պոլսոյ հրակիզման պատ-
մարիմնը, Ս. Յակովայ ձեռագրաց մատե-
նագրանի թիւ 892ը։

Պատմութիւն մը չէ անիկա, ինչպէս
կը հասկնանք բառը մենք, պարզ մահկա-
նացուներս։ Իրողութիւն է անշուշտ անոր
նիթը, — հրդէն մը որ Օրագրութեան մէջ
արձանագրուած է։

«Իսկ ի հասանիլ մԳ-ի Յալիս Շաբարի
առուր եղեւ կրակն մեծ ի Սամազօլ, բարձ
չէր եղեւ»։ (Օրագրութիւն 1660 էջ 356)։

Ձեռագիրը կուտայ ժամանակին բոլոր
գահականներուն անունները, գործածուած
տամարական թռականները։ Կ'առնեմ հայ
մը։ ԱՅ ի մարդկագրեննե բանին Ասունոյ
առ փրկութիւն մեզ, հազարերողի, վեց
հարիւրուրդի եւ վարաներողի (1660)

97 միջակ մէծութեամբ թուղթեր (194
էջ) կը պատմին ազէտը։

«Արդ, ի սկիզբն յառաջարկութեան
(յ)իրիս և հրակիզութենէ մեծի արքայա-
կան քաղաքիս և մեծահամբաւ ծովահայ-
եաց կոստանդնաշէն Պալսոյ, մեծաթաղծ
ոգով, և սրուարեկ հեծութեամբ, բարձրա-
կական ողբովք, տառանիմ առաջի բարու-
նական (յ)երամոց, երջանկակրօն մաքրա-
նուէր ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ և
ժանկանց նորածնելոց՝ խոհեմազարդ աշա-
կերտելոց՝ և որոց պատահեցինն զրոց նո-
րագերափ որ ըստ անուանն իւրոյ Հրակիզ-
ման յորջործի։ ճահաւորեցայ ըստ ձեր որ-
բոյ խոհականութեան տրամախոնել զներ-
կայիս ընթացս կէտի, ըստ ենթազրութեան
կերպի։ և գուք որպէս անարգամեծար լու-
սերանգ իմաստուք ներգահապէս մատու-
շեք զունկն ձեր ի լուր, զի և սա՛ երկը-
պագութեամբ ձերդ ականակիտ մտաց ըզ-
պատճառն բանի ի զէմս բեր։ և զի թէպէտ
պարտ էր խմաստնոյն խրատու զչափ անձին
գիտելով հրաժար լինել այսպիսեաց ըստ
մարգարէին։ Ոչ զնալով ընդ մեծամեծ եւ
ոչ ընդ այնոսիկ որ սքանչելիք են՝ առ սակի

անդէպ նուաստութեանս տհասի, և չըդութապատժամանակիս բերմանց անյարմարապէս երեեալ զըուցք, սակայն զբաղծակայն իմ ժտելով ալեբրսեցից առաջի ձերդ իմաստութեան զի զկարէն պահանջելով անքամահ կալչէք զի ընդ իմում խոստովանութեանս ի գտանելն յայս թերի և անյարմար:

Սյապէս կը սկսի յառաջաբանութիւնը այս հրդեհին: Մէջքերումը աւելորդ կ'ընծայէ որևէ մեկութիւն: Մեր հին մատենագրութեան ամենէն յաշը ոճն է ասիկա:

Ու կրակը.

— Յեղեւ յանկարծակի թնդիւն ահեղ, որպէս զի հրածգութիւն զոլ ի տեղւոջոյ յայսմիկ ուստի ի կրպակէ առն փանաքի սանտինոյ միոջ հուր կայծեալ որ է ի հրւսուսոյ կոյս առ ի յեզրէ ծովուն Պոնտոսի՝ որոյ անուն տեղւոյն Այասմայ Դափի յորջօրջի զոր վառեալ հրոյն անտանօր սաստիկ արծարծմամբ և իսկոյն կէտի յարեաւ հողմ յուժգին առ ի յօժանդակութիւն հրոյն վասնորոյ վերացեալ յոզս բոցն բարկութեան և եռայր որպէս զնարպով լցեալ և տոշուրէր զշէնս ներքուստ սահմանացն եւ պայթեալ զպարոպօքն արտաքոյ և մըրեղէն բոցով ներքուստ եւ արտաքուստ զշինուածս վաճառուց կրպակաց պախալովք, և պազարնովք, քերեստէնովք, զարունովք և թուփէքնովք. և այլ արհեստաւորաց քեարկեանովք եւ գործատեղօք ի վայրկեան ժամանակի դաշտեցուցանէր և ի ներքուստ վազեալ որ առ ի վերայ քաշաքին կծկծեալ բարձրացեալ երկուց բազկաց կուսիւ և իսկոյն զօճախ ենէնկիչէրոցն որ Աղա Դափուսի կոչեւր համայն չըջապատ փայտիւքն գետնացուցանէր. և ոչ կարացին այնքան զօրք դրանն այնմիկ և կամ յայլուստ հաւաքեալքն մասն ինչ փայտի փրկել և չինուց ինչ օգնել և կամ բռնակալքն իշխանոք հանդերձ ոչ կարացին պարտել զառաջդիմութիւն հրոյն կամ մերձենաւ կարել:

Կրակը կը հասնի Օճաղ աղասի.

